



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ. ՏԱՐԻ - ԾԳՈՍՏՈՍ 1936 12^{me} Année - Août 1936

Խմբագրական

Ճրանագիտական բարեկարգիչ եկեղեցիներու միութեան հարցը Զ. Բ. Պ.

Հոգ. Կեանք

Ճշմարիտ քրիստոնեան

Թարգ. Վեր. Վ. Գ Մուսճեան

Հոռտերի աղօթքներէն մէկը

Գառնուկին հարսանիքը

Յովսէփ Թ. Պէրպէրեան

Շնորհաց ծովէն

Վկայութիւնս

Մարտիրոս Թադէոսեան

Կենաց ածուներէն

ԲաճէԼ Նազարեանի երկինք փոխադրուիլը

Մարտիրոս Նազարեան

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչութիւն

Վ. Ս.

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը ընտանիքին մէջ

Թարգ. Ի. Յ. Աբրահամեան

Պատանեաց

Հման թողութիւն

Տէրոջը յուսա



1997

ԺՈՋԷՑ Կ. ՊԱՐՄՈՒՄԵԱՆ

708

— ԲՍԺՆԵԴԻՆՆ Է —

MARSEILLE (France)

Le Gérant : M^r. le PASTEUR KALTENBACH

Արձնացի՛ր Կոնս-
տանդուլէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Կանգիտող մանելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի: ալ առ-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի բուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1936

ԹԻԻ 8



ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳԵԱԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Ա.

Երեք տարիէ ի վեր կարեւոր հարց մը ան-
նախընթաց կերպով կը յուզէ Ֆրանսական բա-
րեկարգեալ եկեղեցիները:

Ֆրանսացի բողոքականներու եկեղեցական
վարիչները կ'առաջադրեն վերջ տալ իրենց տար-
բեր յարանուանութեանց եւ միակ եկեղեցիի մը
մէջ, իբր «մէկ հօտ» կազմակերպել Ֆրանսայի
համայն կալվինական եկեղեցիներու գաւազները:

Հարցը շատ փափուկ եւ կնճռոտ է: Վերջին
100 տարիներու ընթացքին երեք գլխաւոր բա-
ժանումներ տեղի ունեցած են կալվինական եկե-
ղեցիներուն մէջ:

1830ին տեղի ունեցած է Մեթոտական եկե-
ղեցիին բաժանումը:

1848ին տեղի ունեցաւ Ազատ եկեղեցիին
(Eglise Libre) բաժանումը:

1906ին Բարեկարգեալ Աւետարանական եկե-
ղեցիին (Eglises Réformées Evangeliques) եւ
Բարեկարգեալ եկեղեցիներու (Eglises Refor-
mées) բաժանումը:

Ձեռք յիշեր Լուտերականները, Մկրտչական
եկեղեցիները, զանազան եղբայրութիւնները եւ
այլ փոքրամասն հատուածները որոնք ռեւէ կեր-
պով չեն կապուած զմեզ զբաղեցնող հարցին:

Ֆրանսայի մէջ Աւետարանական համայնքը
կը ներկայացնէ երկրին բնակչութեան շուրջ
մէկ քառասուներորդը: Այսքան պզտիկ համե-
մատութեան մը մէջ երեւան եկող բաժանումնե-
րը հարկաւ ունին իրենց անպատեհութիւնները,
ցաւալի եւ անդամալուծող ազդեցութիւնները: Ա-

հա թէ ինչու միշտ փափաք յայտնուած եւ ջան-
քեր եղած են զտնելու համաձայնութեան եզր
մը եւ զործնական միացման մը իրական պայ-
մանները: Խնդիրը մեծաքալ յառաջդիմած է
վերջին երեք տարիներուն մէջ եւ 1936ի կիսուն
զանազան յարանուանութեանց Միութեան ժո-
ղովներուն մէջ, սկսած են համաձայնիլ որոշ բա-
նաձեւերու շուրջ, այսպէսով ձգելով միացման
խարխիւները:

Այս հարցը կը ներկայացնենք «Բանբեր» ի ըն-
տանիքին խորհելով որ մեզի ներելի չէ լռել կամ
անգիտանալ այս մասին: Մեր արտասահմանի
ընթերցողները անտարակոյս պիտի հետաքրքր-
ուին այս նիւթով, իբր ժամանակակից եկեղե-
ցական պատմութեան մէկ էջովը: Իսկ Ֆրանսա-
հայ Աւետ. եկեղեցիները անշուշտ չեն կրնար
անտարբեր մնալ իրենց անմիջական կրօնական
շրջանակը կազմող խնդրոյն հանդէպ: Իրաւ է որ
այս պատմական իրողութիւնը ուղղակիօրէն կապ
չունի մեզի հետ, սակայն օգտակար է մեր լու-
սաւորուիլը, հարկ եղած ատեն որոշապէս եւ
զիտակցօրէն արտայայտուելու համար:

Նախ պարզենք կացութիւնը, զի ընդհանրա-
պէս մենք շատ չենք ճանչնար մեր Ֆրանսացի
եղբայրներուն պարագաները: Կը փափաքինք
անկողմնակալ եւ իրատես կերպով ներկայացնել
հարցը իբր չեզոք դիտող, մեր անձնական հա-
մոգումները եւ եզրակացութիւնները պահելով
վերջաբանին:

վնցե պի իշադարձութիւններ:

Կարծեմ հարկ չէ մինչեւ 16րդ դարու բարեկարգութիւնը ետ երթալ բացատրելու համար ֆրանսացիներուն մէջ Աւետարանականութեան ծագումն ու ընթացքը: Շատերս գիտենք «Հիւկնո» ներու պատմութիւնը, անոնց քաջած տառապանքները, հերոսական զոյամարտը, անոնց մարտիրոսութիւնները հաւատքի եւ իղծի ազատութիւններուն համար: Բանքերի հրատարակութիւններէն մին, շատ հետաքրքրական լոյս մը կը նետէ այդ շրջաններէն միոյն վրայ(1):

«Հիւկնո»ները ունեցան շատ մը ելեւէջներ: Ընդհանրապէս ենթակայ «Հոովմի Մեծ Աղջկան», կաթոլիկ Ֆրանսայի ատելութեան դաւերուն, հալածանքին կամ ճնշումին օրուան քաղաքականութեան համաձայն: Եթէ ունեցաւ ազատութեան եւ հանգիստի պահեր, ընդհանրապէս ճնշուած եւ սահմանափակեալ եղած են ու զրկուած անհրաժեշտ քաղաքացիական իրաւասութիւններէ եւ պետական պաշտպանութենէ:

Նափօլիոնի Ա. հիւպատոս եղած օրերուն 15 Յուլիս 1804ին Պիոս Է. Պապին հետ կնքած համաձայնագրի մը մէջ, կարգ մը յօդուածներ կային նաեւ բողոքական ֆրանսացիներուն համար: Պետութիւնը կը վճարէր հովիւներուն թոշակը, բաւ էր որ անոնք Աստուածաբանութիւն կարգացած ըլլային: Կը ճանչնար շրջանային եկեղեցիներուն ներկայացուցիչներու (Cousistoire) ժողովը, բայց ո՛չ աւելի լայն եղող շրջանային կամ Աղգ. Միութեան ժողովները (Synode): Այս համաձայնագիրը գէթ արտաքինապէս Միութեան ձեւ մը կուտար «Ֆրանսայի Բարեկարգեալ Եկեղեցիին» վասնզի կառավարութիւնը կը մերժէր խառնուիլ կամ ճանչնալ ներքին պառակտումները:

1872ին սակայն հարկ եղաւ քուէարկել հաւատոյ հանգանակ մը. Ուղղափառները(2) հակառակ Արդիականներուն(3) դիմադրութեան, ձայնի

.....

(1) Տես «Անպատի եկեղեցին» Թարգ. Բրեժ. Գ. Խա. յիկնան: Հրատարակութիւն «Բանքեր»:

(2) Ուղղափառ բնելով կը հասկնանք այն հաւատացեալները որոնք կը հաւատան Ս. Գրքին լիակատար ներշնչման եւ կ'ընդունին ամոր սովեցուցած բոլոր վարդապետութիւնները, ջանալով հաւատարիմ ըլլալ Աստուծոյ խօսքին, Թէ՛ Ծագիլին, Թէ՛ գրիլին: Անոնք են պապականական վարդապետները:

(3) Արդիական բնելով կը հասկնանք անոնք որ Ս. Գրքին լիակատար ներշնչումը չընդունելով կը մերժեն նաեւ ամոր պարունակած կարգ մը վարդապետութիւնները, օր. Փրկչին կուսական սնունդը. մարմնով չարութիւնը, երկրորդ փառաստ, չափաւեանական կորուստը եւն: Արդիականութեան մէջ շարափարի մեծ տարբերութիւններ կան:

առաւելութեամբ քուէարկեցին հաւատարիմ եւ պապականողական հաւատոյ հանգանակ մը: Սակայն քանի որ բոլորը չէին ստորագրած, պետութիւնը անվաւեր սեպեց այդ նիստերուն բոլոր որոշումները: Ստորագրողները բարձրագոյն անպաշտօն սինօդով մը բոլորեցան այդ հանգանակին շուրջ: Արդիականները բաւականացան շըրջանակային պաշտօնական ժողովներու գործակցութեամբ: Այս շարունակուեցաւ մինչեւ որ 1906ի նոր օրէնքը պետութիւնը բոլորովին զատեց ամէն կրօնական կազմակերպութենէ եւ եկեղեցի ու պետութիւն փոխադարձաբար ազատ եղան:

Այս առթիւ հարց ծագեցաւ միութեան մասին: Արդեօք կարելի չէ՞ր գտնել միացման գետին մը Բարեկարգեալներու բոլոր ընտանիքը համախմբելու համար: Վերցնել այն գաղափարական արգելքները որոնք արդիականներու համար «խոչ» էին: Գտնել ճկուն եւ լայն բանաձեւեր որոնք ընդունելի ըլլան բոլորին: Նոյնիսկ ի հարկին պահել 1872ի հանգանակը իւր եկեղեցիին դրօշակը, բայց գէթ չստիպել բոլոր հովիւները որ անհատապէս ընդունին այդ բանաձեւերը քանի որ ճիշդ այդպէս չէին հաւատար: Ուղղափառները յայտարարեցին թէ միացման համար հարկ էր ունենալ որոշ եւ մէկ հաւատք ու դաւանութիւն, թէ առանց անվերապահ համաձայնութեան կարելի չէր յուսալ միացման:

Յայնժամ միութեան փափաքողները քաջուցան եւ հիմնեցին Jarnach խումբը, բռնելով միջին դիրք մը ուղղափառներուն եւ ծայրայեղ արդիականներուն միջեւ, իրենց նպատակն էր «Պապանի Ֆրանսայի Աւետարանականութեան միութիւնը թէ՛ հաւատքի թէ՛ ազատութեան մէջ»:

Այսպէս էր որ Charles Wagner-ի եւ Wilfred Monod-ի շունչին տակ ծնաւ Բարեկարգեալ եկեղեցին (Union Nationale des Eglises Réformées) Այս երկու գլխաւոր հատուածները որոնց միացումը կը դարբնուի հիմա, այսպէս էր որ երեւան եկաւ:

Առաջինը, Eglise Réformée Evangelique, ըսենք ուղղափառներունը, ի յայտ եկաւ իբր «պաշտպան հաւատոյ» եւ նախանձախնդիր ախոյեան Ս. Գրքի վարդապետութեանց: 1872ի հանգանակը կը կազմէր իր քարոզութեան եւ տուած դաստիարակութեան սահմանները: Նա կը ջանար Ս. Գրքին անխարդախ կաթովը սնուցանել եւ մեծցնել հոգեւոր կեանքը:

.....

Կրնան ըլլալ չափաւոր, միջին կամ ծայրայեղ սակայն միշտ կը տարբերին պապականողական վարդապետներէն:

Երկրորդը Eglise Réformée կը խորհէր որ էական միութիւնը չէ թէ դաւանանքի կամ գաղափարի, այլ կեանքի եւ գործունէութեան մէջ պէտք էր փնտռել: Վարդապետական գետնին վըրայ չէ որ քրիստոնեաները կրնան միանալ ու հոգիներու արժէքները կրնան կշռուիլ կ'ըսէր:

Այս օրերուն, երբ Ֆրանսայի մէջ կարծիքները այնքան յեղեղուկ են, կ'ըսէ Առաջինը E. R. E. պէտք է ժողովուրդին տանիլ հաստատուն վարդապետութիւն մը եւ ունենալ քարոզիչներ որոնք չվախնան զանոնք քարոզելէ: Ո՛չ ապաքէն որոշ եւ ուժեղ վարդապետութիւն մը, եթէ միաբանօրէն ուսուցուի եւ կիրարկուի, ուժ եւ օրհնութիւն է եկեղեցիին: Մեր երկիրը կ'աթոռիկ կ'աթոռիկ ունի, պնդենք առաքելական հանգանակին վըրայ, մեր պարտականութիւնն է հաւատարմօրէն պահել «Մեր հայրերէն մեզի աւանդուած հաւատքը»:

Աշխարհ գայթակղած է բաժանումներէն կ'ըսէ E. R. ցոյց տանք որ մենք կրնանք մէկ ըլլալ հակառակ վարդապետական տարակարծութիւններու: Աւետարանը արդիւնաւոր դարձնենք, զայն պարզ եւ արդիական լեզուով մը բացատրելով: Հաւատոյ հանգանակը յառաջդիմութեան եւ գործի ծրագիր մըն է, ամէն ոք թող ամենէն ինքնաշարժիկ ձեւովը բացատրէ զայն:

Երկրայ իրադարձութիւններ

Այս երկու հասուածները 30 տարի քով քովի ապրեցան: Ժամանակի եւ պարագաներու ազդեցութեան տակ հետզհետէ իրարու հետ շփման մէջ մտան, մինչեւ որ յաճախ կը շփոթուէին իրարու հետ: Ահա թէ ինչո՞ւ նորէն հարցուեցաւ թէ ին՞չ մենք չենք միանար:

Նախ կարգ մը հասարակաց գործունէութեանց առթիւ այս երկու հասուածներու վերաբերեալ եկեղեցիներ եւ հովիւներ ստիպուած եղան զորո՞ւնակցելու:

Ապա տեղի ունեցաւ «հովուական փոխանակութիւններ»: Մէկ հասուածին պատկանողները կը պաշտօնավարէին «միւս եկեղեցիին» մէջ ու փոխադարձաբար: Այսպէս նոյն տեղի մէջ թուով քարոզիչներ, որոնց մտայնութիւնը կը ներէր այս քայլը առնելու:

1914-18ի պատերազմը կարեւոր դեր մը խաղաց: Յայտնի է թէ շատ մարդերու մէջ կարեւոր յեղաշրջումներ մտցուց Մեծ Աղէտը: Անոր յաբուցած մեծ խնդիրներուն առջեւ ներքին վէճերը փոքր թուեցան: Հովիւները կ'աթոռիկ կամ անհաւատ տարրերուն հետ շփման մէջ գալով, հասկը-

ցան թէ որքա՞ն շատ կէտեր զիրար մէկգմէկու կը կապէ մինչ իրենք բաժնուած կը մնան:

Իսկ Աստուածաբանութեան նոր ուսանողները որոնք չեն ճաշակած 1906ի բաժանման տագնապները, որոնք նաեւ պէտք է ըսել չունին հին սերունդին ո՛չ հոգեւորութիւնը ո՛չ ալ կորովը, չեն հասկնար այս բաժանումը, զի ստուգիւ իրենց ստացած կրթութիւնն ալ կը տարբերի իրենց հայրերուն դաւանական կրթութիւնէն: Անոնց մեծամասնութիւնը եթէ նոյնիսկ հետեւող ըլլայ Կալվինի կամ Քարլ Պարթէի, տակաւին կը ցանկալ Միացման ու կ'արտայայտուի այսպէս:

Վերջապէս ժողովրդական խաւերն ալ, այսքան անորոշութիւն եւ մերձաւորութիւն բաւական կը համարին ամէն գնով միացում ձեռք բերելու: Տեղական պայմանները աչքառու են, պզտիկ գիւղի մը մէջ 2-3 տարբեր եկեղեցիներ, իրենց շէնքերով եւ հովիւներով ու... փոքրածիւ հաւատացեալներով շօշափելի բաներ են եւ միութեան փափաքը կը զօրացնեն: Մանաւանդ որ տարիներէ ի վեր նիւթական տազնապը կը ճնշէ եւ ծանր հոգերով կը չարչարէ թէ՛ համայնքները, թէ՛ ղեկավարները որոնք ի զուր կը ճգնին տարեկան բացերը գոցելու: Համայնքները կը պահանջեն որ վերջանան ուժի եւ դրամի սպառումները:

Անշուշտ կարելի չէ խորհիլ որ համայնքներու կարծածին չափ ղիւրին է հարցը: Տակաւին վարիչները հարկ սեպեցին հետաքրքրուիլ, տըքնիլ, փորձել եւ վերստին սկսիլ բազում փորձեր եւ ձեռնարկներ, Միացման հարցը լուծելու համար:

Հորիզոնին վրայ սպառնալից ամպ մըն ալ կար. թերեւ ղեւ ո՛չ շատ մեծ, բայց ամպը հոն էր: Անհամբերները ճշռում կը բանեցնէին ղեկավարներուն վրայ, «Միութիւնը յաջողեցուցէք, եթէ բոլոր Ֆրանսայի համար չկարենաք ըսել իսկ, մենք տեղական եւ շրջանակային միութիւններու պիտի ձեռնարկենք»:

Որքա՞ն խղճալի եւ քառասային վիճակ մը կը սպառնար:

Աւելցնենք ի վերջոյ արտաքին շրջանակներու առջեւ եղած վիճակը: Կաթոլիկ եկեղեցին իրաւ ունի իր ներքին անհամաձայնութիւնները, բաժանումները, պառակտումները ու տարբեր եւ երբեմն մըձակից կազմակերպութիւնները, սակայն միակ ճակատ մը կը ներկայացնէ աշխարհի: Այս դիրքէն՝ անոնք յաճախ կը հարուածեն Բարեկարգեալները ըսելով որ «Դուք եկեղեցի



ՃՇՄԱՐԻՑ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ

Քրիստոնեան Աստուծոյ ծնած է, Քրիստոսի մէջ պատուաստուած, եւ Սուրբ Հոգիին բնակարանն է: Անոր բնաւորութիւնը նորոգուած է, անոր միտքը լուսաւորուած է, անոր հոգին փոխուած է:

Ան չէ՛ ինչ որ էր, քանզի շնորհքը փոխած է զանիկաւ: ան չէ՛ ինչ որ կը փափաքի ըլլալ, փամանդի շնորհքը այժմ կատարելագործուած չէ: ան չէ ինչ որ պիտի ըլլայ, փամանդի շնորհքը փառաց մէջ կատարեալ կ'ըլլայ: Քրիստոսի գիտութիւնը իր փառքն է, Անոր միտքը իր դաւանութիւնը, Անոր սէրը՝ իր երգը, Անոր նմանիլը իր կեանքը եւ Անոր հետ ըլլալը իր գերազոյն փափաքն է:

Հաւատքով Քրիստոս կ'ընդունի, Անոր կը նայի եւ կը հանգստանայ, Անոր խօսքերը կը լսէ եւ Անոր քայլերուն կը հետեւի, ամէն բանի մէջ Անոր հաճութիւնը կը փնտռէ: Քրիստոսի թաղաւորութեան լեզուն կը գործածէ, Անոր օրէնքները հնազանդելով կը մեծարէ, Անոր սահմանած արարողութիւններուն կը հաւնի եւ կը կատարէ, Անոր զգեստը կը հագնի եւ Անոր փառքին համար կ'ապրի:

Ճշմարիտ քրիստոնեային մէջ Քրիստոս կ'ապրի, կը խօսի եւ կը գործէ: Ճշմարիտ քրիստոնեան Քրիստոսի ներկայացուցիչն է երկրի վրայ:

.....

չէք, այլ աղանդներու զանազանութիւն մը»: Այսօրինակ յարձակումներու պատասխանել դժուար չէ, տակաւին որո՞ւ փափաքելի չէ ըլլալ «մէկ սիրտ, մէկ մարմին»:

Ահա ուրեմն թէ ինչո՞ւ կը ձեռնարկուի Միութիւն մը որ շատերու կարծիքով օրուան էսկական պահանջն է:

Սակայն կարելի՞ է առ այս հարկ եղած իրերահասկացողութիւնը եւ վստահութիւնը գտնել, եւ ձեռք բերել «Մէկ եկեղեցի» մը հարկ եղած հիմը:

Այդ մասը յաջորդով:

Զ. Բ. Պ.

Անոր վկան մարդոց առջեւ եւ Անոր հետեւորդը Աստուծոյ առջեւ: Ճշմարիտ քրիստոնեան Քրիստոսի վարդապետութիւններուն ունկնդրութիւն կ'ընէ, Անոր պատարագովը կը հանգստանայ, Անոր միջնորդութեամբը իր անձին կ'օգնէ եւ ինչդութեամբ Անոր կանոններուն կը հնազանդի: Ճշմարիտ քրիստոնեան կը հետաքրքրուի զտոնելու թէ, Քրիստոս ի՞նչ կ'ուզէ որ իր ծառան գիտնայ, քնէ եւ վայելէ:

Քրիստոս գիտնալ՝ մտաւոր քրիստոնէութիւն է: Քրիստոսի հնազանդիլ՝ գործնական քրիստոնէութիւն է: Քրիստոսը վաճելի՝ փորձառական քրիստոնէութիւն է: Իսկ Քրիստոսի պէս ըլլալը կատարելագործուած քրիստոնէութիւն է:

Ի՞նչ որ հացը քաղցածին համար է եւ ջուրը՝ ծարուածին ու ժայռը՝ իր հովանիով՝ հեղձուցիչ օրուան մէջ տառապող մարդուն, անանկ ալ է Քրիստոս հալածուող ու չարչարուող քրիստոնեային:

Քրիստոնեան աշխարհի մէջ է, բայց աշխարհէ չէ, աշխարհի հետ խառնուած է, բայց անկէ զատուած է, աշխարհի մէջէն կ'անցնի, բայց առանց անոր յարելու: Կռապաշտը իր կուռքովը կը պարծի, Մուհամետականը իր սուտ մարգարէովը, Կաթոլիկը՝ կոյս Մարիամով, բայց ճշմարիտ քրիստոնեան միմիայն Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի խաչովը կը զուարճանայ:

Ճշմարիտ քրիստոնեան ռազմիկ է եւ անշուշտ պիտի պայքարի: Նաեւ յաղթող է ու անշուշտ պիտի տիրէ: Քրիստոնեան երկրի վրայ պանդուխտ է, բայց երկնից մէջ կը բնակի: անիկա անապատին մէջէն ուղեւոր մըն է, բայց երկնից մէջ արձանագործուած հպատակ մըն է:

Քրիստոնեան Քրիստոսի դրօշմն է, Հօրը ցուացումը եւ Սուրբ Հոգիին տաճարը: Հակադրէ զայն անհաւատին հետ իր հաւատքովը, իր կրօնիցը անձնատուր եղող մարդուն հետ իր կեանքովը, սոսկ բարոյականի տէր մարդուն հետ իր սրտովը եւ փարիսեցիին հետ իր հոգիովը, (Աքրահամի եւ մեծատունին միջեւ կեցող անդունդը պիտի տեսնես):

Քրիստոնեային ազգահամարը Եհովայէն է, Անոր բնակութիւնը երկինքէն է եւ անոր անունը Անտիոքէն: Ո՛հ քրիստոնեայ, խիստ բարձր է քու դիրքդ, շողշողուն է քու պսակդ, անծայրածիր է քու օրհնեալ յոյսդ: Ամէն բան քու կողմէն եւ Ամէն բանովդ դուն ալ Քրիստոսինը եւ Քրիստոս Աստուծոյ:

Թարգ. Վեր. Վ. Գ. ՄՈՒՄՃԵԱՆ

(Հեղինակը գիտցուած չէ)

ԼՈՒՏԵՐԻ ԱՂՕԹՔԵՆԵՐԷՆ ՄԷԿԸ

ԳԱՌԵՈՒԿԻՆ, ՀԱՐՍԱՆԻՔԸ

Իր մահուանէն քիչ առաջ, մեծ բարեկարգիչը հետեւեալ աղօթքը շարադրեց եւ արտասանեց որ կրնայ նկատուիլ որպէս իր կտակը:

«Իմ սիրելի Աստուածս, սրտանց շնորհակալ եմ Քեզմէ որ Դուն այնպէս ուզեցիր որ ես այս երկրի վրայ ազգաւ եւ մուրացկանի պէս ըլլամ: Այս պատճառաւ, կարող չեմ թողուլ կնոջս եւ զաւակներուս ոչ տուն, ոչ արտ, ոչ դրամ, ոչ ալ ոեւէ նիւթական բարիք: Քանի որ Դուն զանոնք ինծի տուիր, Քեզի կը վերադարձնեմ զանոնք եւ Քեզի կը յանձնեմ: Դուն ով Աստուած, որ շատ հարուստ եւ շատ հաւատարիմ ես, կերակրէ զանոնք, կրթէ զանոնք, քաջալերէ զանոնք, ինչպէս Դուն զիս կերակրեցիր, կրթեցիր եւ քաջալերեցիր, Դուն որ որբերուն հայրը եւ որբեւարիներուն պաշտպանն ես:

«Իմ Տէրս Յիսուս Քրիստոս, իմ շատ բարի Տէրս, Դուն որ ըսիր, «Խնդրեցէք եւ պիտի տրուի ձեզի, փնտոեցէք եւ պիտի գտնէք, դուռը զարկէք եւ պիտի բացուի ձեզի», տուր ինծի այս խոստման համաձայն, ոչ թէ ուկի կամ արծաթ, այլ զօրաւոր եւ անդրադուրի հաւատք մը: Շնորհէ որ փնտոածս գտնեմ. ոչ թէ այս աշխարհի վայելքները եւ հաճոյքները, այլ Քու մխիթարութիւններդ եւ նոր զօրութիւն մը Քու սուրբ եւ փրկարար Խօսքէդ: Ահա կը զարնեմ, բաց ինծի: Աշխարհի մեծ սեպած բաներէն ոչինչ կ'ուզեմ, քանի որ այդպիսի բաներ զիս Քու աչքերուդ լաւագոյն չեն կրնար դարձնել, բայց աւելի Քու Սուրբ Հոգիդ տուր ինծի, որ կը լուսաւորէ սիրտըս, կը զօրացնէ եւ կը մխիթարէ զիս տագնապներուս եւ պիտոյքներուս մէջ եւ զիս պիտի պահէ ճշմարիտ հաւատքի եւ Քու վրադ եղած կատարեալ փոտահութեան մէջ մինչեւ մահուանըս ժամուն: Այսպէս թող ըլլայ: Ով իմ սիրելի Աստուածս եւ շատ բարի Հայրս, ուրիշ շատերու տուածդ պարգեւներէն աւելի թանկագին պարգեւներ տուիր ինծի: Եթէ Քու կամքդ է, կ'ուզէի քիչ մը աւելի երկար ատեն զանոնք պարծածել Քու սուրբ Անուանդ փառքին եւ Քու ծառաներուդ յառաջացման եւ մխիթարութեան համար: Բայց Քու աստուածային եւ հայրական կամքդ թող ըլլայ: Մէկ բան միայն կ'ուզեմ, ըլլայ ապրելովս, ըլլայ մեռնելովս, Քու Անունդ փառաւորուի: Այսպէս թող ըլլայ»:

Եւ ըսաւ ինծի, Գրէ, երանելի են անոնք որ Գառնուկին հարսանեաց ընթրիքին կանչուած են. ու ինծի ըսաւ, Ասոնք են Աստուծոյ ճշմարիտ խօսքերը: Ես ալ անոր ոտքերուն տուջեւ ինկայ, որպէսզի անոր երկրպագութիւն ընեմ. ու ըսաւ ինծի, զգուշացիր, մի ընեք, վասնզի ես ալ քու ծառայակիցդ եմ ու քու եղբայրներուդ որոնք Յիսուսի վկայութիւնը ունին, Աստուծոյ երկրպագութիւնը (վասնզի Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է):

Յայտ. ԺԺ. 9-10

Սիրելի «Բանբեր» ընթերցող եղբայրներս եւ քոյրերս, գիտենք թէ այս Յայտնութեան գիրքը գրողը Յիսուսի սիրելի աշակերտն է, այն է, որուն համար ըսաւ Պետրոսին, թէ որ անիկա ուզեմ որ մինչեւ իմ գալս կենայ, քու ինչ հոգդ է, որով կը հասկնանք թէ Յովհաննէս առաքեալը շատ ծերացած ու երկայնակեաց կեանք մը ապրեցաւ երկրի վրայ, եւ այս պատճառաւ իր կեանքին վերջին ժամանակները Աստուծոյ շնորհքով իրեն եղած զարմանալի ու դժուարահասկնալի տեսիլքը ու յայտնութիւնը գրեց, որ այսօր մեր ձեռքը գտնուելով կրնանք Յիսուսի հոգիով հասկնալ եւ ապագայ ժամանակին մէջ պատահելիք դէպքերուն ու եկեղեցիին վրայ գաւափար մը կազմել: Գուցէ առաքեալին տեսիլքը այս օրերուն համար է, ինչպէս որ կացութիւնը կը ցուցնէ: Մէկ կողմէն քաղաքական տակնուվերայութիւնները եւ միւս կողմէն եկեղեցական բաժանմանց հակառակութիւնները, որոնք նըշաններ են ըստ գրուածին իր գալուն մօտենալուն: «Երբ տեսնէք այս բաներուն ըլլալը, գիտցէք որ մօտ է դռներուն քով» Մարկ. ԺԳ. 29:

Զեմ գիտեր ինչո՞ւ այս Յայտնութեան գիրքը չկարդացուի ինչ եկեղեցիներուն մէջ, Աւետարաններուն եւ միւս առաքելոց թուղթերուն պէս. եղանակաւոր կարդացուելու յարմար չըլլալուն, թէ ոչ անհասկնալի անպէտ բան մը նկատուած է. մինչ ընդհակառակը այնքան պիտանի ու էական յայտնութիւններ են:

Ես այսօր ուզեցի այդ գրուածքներէն Յայտ. ԺԺ. 9-10 համարները մեր ուշադրութեան առարկան ընել, որ կ'ըսէ, «Երանելի են անոնք որ Գառնուկին հարսանեաց ընթրիքին կանչուած են եւ այլն»:

Նախ երբ կարգանք այս գրքին ԺԸ. գլուխը, հոն պիտի տեսնենք հրեշտակի մը ձեռքով տրուած



ՎԱՅՈՒԹԻՒՆՍ

Կոյր էի ու հիմա կը տեսնեմ:

Յովհ. Թ. 25

1892 Օգոստոսի մէջ ծնած եմ Սեբաստիոյ Գանկալ գիւղը: Կանուխ հասակէս որք մնացած

այն պատգամը թէ, ինչպէ՞ս ինկաւ մեծ Բարեւոյնը, իր զեղխութեան ու պոռնկութեանը պատճառաւ, որ բոլոր ազգերը գինովցուց ու մոլորեցուց, որոնք խմեցին անոր կատաղի պոռնկութեանը գինին, եւ ասոր համար իրեն եղած է այդ մեծ հատուցումը:

Անկէ վերջը ձայն մը կուգայ երկինքէն իրեն շատ բազմութեան ձայնի պէս, ըսելով, Ալէլուիա, փրկութիւն ու փառք եւ պատիւ ու զօրութիւն մեր Աստուծոյն, ինչու որ Աստուած ուղիղ եւ արդար է իր դատաստաններուն մէջ:

Արդ, որոնք են այդ կանչուածները, որոնց համար առաքեալը կ'ըսէ թէ երանելի են: Անոնք են, որոնք Յիսուսի սուրբ արեամբ իրենց մեղքերէն լուացուած, մաքրուած ու արդարացած ըլլալով իրեն կը հետեւին եւ իր անուանը համար կը նախատուին, կը չարչարուին ու մինչեւ ի մահ հաւատարիմ մնալով կը ըսուին: Ահա այսօր իրենքուն համար երանի կուտայ, վասնզի Գառնուկին հարսնիքը հասած կը նկատէ:

Ուստի մենք քրիստոնեաներս պէտք է խնդանք եւ ուրախանանք, քանզի Գառնուկին հարսանեաց ընթրիքին կանչուածներ ենք (Անոր հարսը):

Վասն որոյ ջանանք մենք ամէնքս ալ, Գառնուկին հարսանեաց ընթրիքին կանչուածներս, հարսնիքի վայել (բեհեզէ) հազուատները վրանիս հազած հրաւիրեալներուն մէջ ըլլալ, առ այդ մաքրենք ինքզինքնիս որ դուրսի խաւարը չձգուինք այն օրը, քանզի «սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը» Եբր. Ժ. 34:

Օրհնեալ ըլլայ մեր Աստուածը, որ մեզ խաւարէն լոյսի կանչեց եւ իր Որդւոյն թագաւորութեանը փառքին արժանացուց: Անոր փառք հիմա եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՅՈՎԱԾՓ Թ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ըլլալով 1898ին Սեբաստիոյ Զուիցերիական Որբանոցի տնօրէնուհի Միս Շթուքի միջոցաւ, որ մեր գիւղը եկած էր որբեր հաւաքելու, որբանոց փոխադրուեցայ: Հոն նիւթական, բարոյական կրթութեանէ զատ հոգեկան կրթութիւն ալ առատապէս կը տրուէր: Ս. Գիրք եւ աղօթք ամէն օր առանց բացառութեան ունէինք, ամենէն շատ ուշադրութիւն կը տրուէր հոգեկանի: Ես ալ անձամբ շատ կը սիրէի Ս. Գրոց պատմութիւնները եւ ինչ համարներ որ գոց կը տրուէր, յօժարութեամբ գոց կ'ընէի: Բայց այս ամենուն հետ Սատանան ալ կը գործէր սրտիս մէջ, որչափ կը մեծնայի, այնչափ աւելի հակամէտ էի գաղտնի մեղանչումներու. մանաւանդ երբ որբանոցէն ելայ 1940ին, այլեւս որբանոցի հսկող աչքերէն ազատ էի: Ազատ էի նաեւ յանցանքի մէջ բռնուելու վախէն: Երբ գիւղ գացի, առաջին տարին շատ ուշադիր էի ուրիշ տղոց պէս աղտոտ խօսքեր չխօսելու: Մեծ ջանք կը թափէի ինքզինքս կրթեալ, բարի եւ պարկեշտ ցուցնելու: Այսպէս զրտերեւոյթ լաւ, բայց ներսէս պիղծ ու չար խորհուրդներով, քանզի ինձ պէտք էր նոր սիրտ մը զոր չունէի: 1943-1947 զինուորական շրջանը աւելի ինկած եմ, թէպէտ բնաւ կորսնցուցած չէի փարիսեցիի մը ուշադիր ինքնարդարութիւնը: 1947 Օգոստոսին Երզնկայի Սանսառ Տէրէ կոչուած վայրը զրկուեցայ կառավարութեան հրաժանով սպաննուելու համար, բայց Տէրը հրաշալի կերպով ազատեց մեր 90 հոգիէ բաղկացած հայ գաղթախումբը: Ճամբան Տէրովը աղաչեցի որ զիս պահէ, մեղքերս խոստովանեցայ եւ խնդրեցի որ ներէ. վստահ եմ թէ ինքներեց, քանզի հոն ներքին թեթեւութիւն մը զգացի:

Թէպէտեւ խորունկ ապաշխարութիւն մը չունեցայ, բայց որոշեցի իմ ունեցած մեղքերէն ետ կենալ եւ կրցածիս չափ պարկեշտ կեանք մը ապրիլ: Արդէն ունեցած դիրքս ալ օգնեց որ այն օրերուն մէջ ունեցած լուսովս ապրիմ: Տէրը զիս հարիւրապետի մը քով ծառայ ըրաւ եւ այդ մարդուն միջոցաւ զիս պահեց 2 տարուայ փախստական կեանքիս միջոցին: 1949 Նոյեմբերին մէջ գինուորութեանէ ազատուելով, Սեբաստիա եկայ: Տէրը յաջողեց որ հոն նոր բացուած Ամերիկ. Որբանոցին մէջ ուսուցչութեան պաշտօն մը ստանանեմ: Երբ բաւական նիւթական հանգստութիւն ունեցայ, կրկին հին մարդը սիրտըս զրաւեց ու իմ վրաս կատարուեցաւ Բ. Պետ. Բ. 20-22ի նկարագրութիւնը մինչեւ 1950: Այս ամբողջ ժամանակաշրջանին մինչեւ 1926 ուսուցչութեամբ պարապած միջոցիս միշտ Աստուծոյ

խօսքերը ուրիշներու խօսող եւ Ս. Գրոց դասեր տուող եղած եմ, ըլլայ Սեբաստիոյ որբանոցին մէջ եւ կամ Յունաստանի Բերիա Լիբրադմայի ցորիկօթիկ դպրոցին մէջ: Ինծի համար Ս. Գրոց խօսքերը խօսիլ, խօսակցիլ եւ հակառակողներուն դէմ ալ վիճաբանիլ շատ սիրելի էին. բայց երբ անձնական խոստովանութեան կամ վկայութեան գար, խնդիրը կը փոխուէր: Միշտ ներքին խռովքի մէջ էի, բնաւ խաղաղութիւն չունէի: Թէեւ Ս. Գրոց մէջ յիշուած բոլոր դէպքերուն կը հաւատայի, բայց մեղքերէս ազատիլ չէի ուզեր եւ ինքզինքս կը խաբէի ըսելով թէ Տէրը միշտ կը ներէ: Սասանան աչքերս այնպէս մը կուրցուցած էր եւ զիս Բեթհեզդայի աւազանին քով պառկող 38 տարուայ հիւանդ մարդուն պէս այնպէս մը կաշկանդած էր, որ շարունակ կը տեսնէի բժշկուողներ աջէս ու ձախէս, բայց ես ինքզինքս խաբելով ուրիշները կեղծ միջոցներու դիմողներ կը նկատէի եւ կամ ծայրայեղութեան գացողներ կը կոչէի:

Այսպէս 38 տարւոյն, այսինքն մինչեւ 1930 Յունուար ամսուն, Բեթհեզդայի աւազանէն աւելի սքանչելիօրէն բժշկող աւազանին, Կենաց ջուրին քով հիւանդ պառկած՝ խղճատանջ վիճակով մը կը չարչարուէի հոգեպէս:

Հիմա փառք Փրկիչ Յիսուս Քրիստոսիս, որ 1930 Յունուարէն ի վեր սրտիս մէջ իր անհուն սէրը յորդեց, ինծի ճանչցուց թէ իր սուրբ արեամբը զիս գնած եւ ինձ նման պիղծ ու աղտոտ մեղաւոր մը փրկած ու իմ հին կեանքէս, հին մարդէն եւ անոր ճիրաններէն ազատած է: Յիսուսի ասիկա հրաշքներուն հրաշքը կրնայ նկատուիլ: Մեր Տէրը փարիսեցիական կեղծաւորութիւնը ամենէն շատ պարսաւեց եւ ըսաւ թէ պոռնիկներն ու մաքսաւորները անոնցմէ առաջ երկինք պիտի երթան: Անհուն փառք ու շնորհակալութիւն Հօր Աստուծոյս որ իր անհուն սէրը ցուցուց ինձ նման մեղաւորին, ինծի Ս. Հոգւոյն միջոցաւ իր Որդւոյն վրայ վստահելու, ամբանալու եւ Անով աճելու հաւատքը տուաւ եւ իր խոստովանելը աւատապէս ինծի հասկցուց: Ո՛հ, սքանչելի է հաւատացեալին դիրքն ու վիճակը որ մեր սիրելի ու պաշտելի Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսը իր սուրբ արեամբը ի գոյ բերած է:

Թէեւ անարդ խեղճ մեղաւոր,
Բայց Տէրն զթաց ինձ, իրաւ որ,
Հիմա փրկուած իմ խեղճ հոգիս,
Բազուկներուն մէջն է Փրկչիս:



ԲԱՆԷԼ ՆԱԶԱՐԵԱՆԻ ԵՐԿԻՆՔ ՓՈԽԱԳՐՈՒԻԼԸ

Պատուական է Տէրը լը տուել իր սուրբերուն մահը: Սաղ. ՃԺԶ. 15

Բնիկ Այնթապցի, Փանոսեան Աւետարանական ընտանիքի մը զաւակն էր: 1919 Դեկտ. 18ին ամուսնացանք Այնթապ: 1926 Սեպտ. 19ին Մարսէյլ եկանք: 1928 Յուլիս 19ին Բահէլ ապաշխարեց եւ մօտ 8 տարի հոգեւոր կեանքը ապրելէ յետոյ 1936 Մարտ 24 դիշերուան ժամը 10ին ի Տէր ննջելով իր յաւիտենական հանգիստը մտաւ, ինձ թողելով 15 տարու մէկ աղջիկ ե

Ալ ես իրն եմ ու իմն է Ան,
Մեզ չը բաժներ եւ ոչ մի բան,
Զի Հայրն զըթած ուզեց այսպէս,
Յայտնել անհուն իր սէրը վէս:

Իր Սէրը զիս յոյժ զրաւեց,
Զի ինձ նըման ըմբոստ մը մեծ,
Դարձեալ կըրգաւ Ան ընդունիլ,
Եւ ուսոյն իր փարախն տանիլ:

Ով բարեկամ, ով ալ ես դու,
Նմուշ մ'ըլլայ իմ կեանքս ազդու:
Տէր Յիսուսի թէ փարախէն
Հեռացեր ես, դարձիր մէկէն:

Ուր որ ըլլաս, ինչ որ ընես,
Բընաւ հանգիստ պիտ' չը գըտնես,
Զի կեանքն է սին, աշխարհ ունայն,
Փրկչին մէջ կայ հանգիստ միայն:

Հաւատա թէ միայն Յիսուս
է Տէր հըզօր եւ հոգւոյդ լոյս,
Միայն կրնայ Ան ազատել
Քեզ աշխարհէ, մեղքէ գատել:

Եկուր, այլեւս մի տնտընար,
Ընդունէ Տէրն սիրայօժար,
Արիւն թափեց Ան քեզ համար,
Ո՛հ, հաւատա եւ ապրէ յար:

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

Տրափ

13 ու 4 տարու երկու մանչ գաւակներ: Կնոջս վերջին խօսքերը լսել կարելի չեղաւ ինձ, քանզի հիւանդանոցն էր եւ վերջին ժամուն մեզմէ ե



ոչ մէկը ներկայ չէր իր սնարին վերեւ: «Գիտենք որ ամէն բաները բարիի գործակից կ'ըլլան ունոց որ զԱստուած կը սիրեն» (Հոով. Ը. 28). Աստուծոյ մեծութիւնը եւ իմաստութիւնը եւ գիտութիւնը խորունկ են եւ անքննելի են իր գաղափարա-

նեցը, ու անգննելի են իր ճամբաները, վասնզի ամէն բաները Անկէ ու Անով եւ Անոր համար են. Իրեն փառք, յաւիտեանս: Ամէն: Հոով. ԺԱ. 33-36: Մահուանէն 8 ժամի չափ առաջ զխառն վերեւն էի: Հարցուցի իր հաւատքի հաստատութեանը վրայով: Վկայեց թէ հաւատքով հաստատուն կեցած է, ու ըսաւ, «Փառք ըլլայ Տէրոջը շնորհքին որ այս ալ (վիրաբուժական գործողութիւնը) տուաւ ինձ»: Իր գտնուած վիճակը ոչ իմ մէջս մահուան կասկած արթնցուցին եւ ոչ իր մէջ: Երբ իրմէ բաժնուեցանք, ինձ ընկերացող քանի մը քոյրերու իր վերջին խօսքը այս եղած է, «Յիսուս իմ քովս է»:

Իր մահէն յետոյ ըսի, երանի՜ թէ վերջին ժամուն զխառն վերեւն ըլլայի եւ իր հոգեւոր վկայութիւններն ու յանձնարարութիւնները լըսէի, բայց կ'երեւի թէ Տէրը այսպէս կարգադրած է, Անոր կամբը օրհնեալ ըլլայ, Ամէն:

Այս դէպքը թէ Մարտէյլ, թէ Սէն Լու եւ թէ հանգուցեալին ծանօթ հոգիներուն արտմութեան պատճառ եղաւ, քանզի նա ամենուն սէրը եւ բարի վկայութիւնը շահած էր: Հաւատացեալները սիրոյ եւ հոգիները ապաշխարութեան հրաւիրող վկայ մըն էր: Հետեւեալ համարը իր սիրտը զըրաւած էր եւ յաճախ իր լեզուին վրայ էր, «Ամէն բանէ առաջ իրարու հետ սրտանց սէր ունեցէք» (Ա. Պետ. Դ. 8):

Անցեալի սուրբերուն կենսագրութիւնները իմ կեանքիս շատ օրհնութեան պատճառ եղած են: Ասոր արժէքը գիտնալով սիրելի կենակցիս մահը եւ անոր կարգ մը առաքելութիւնները հոս յիշելով՝ Տէրոջմէ կը խնդրեմ որ բոլոր ընթերցողաց օրհնութիւն ընէ:

«Առաքելի կիներ իր երկան պսակն է» (Առակ. ԺԲ. 4):

Ա. Սէյր.— Անոր ամբողջ ջանքը հաւատացեալներուն գիրար սիրելը եւ մեր Տէրոջ աղօթ-

քի նիւթը եղող «Մէկ ըլլալն էր: Շատ մը հաւատացեալներու տկարութիւններուն աչք զոցելով հաւատքով եւ համբերութեամբ կ'սպասէր, յաճախ յիշելով Գ. Առաք. ԺԷ. 9, Յովհ. ԺԷ. 21 թանկագին համարները:

Բ. Ամենուն ինտ խաղաղութիւն. — Ոչ մէկուն հանգէպ իր սրտին մէջ ատելութիւն կամ տնոր նման բան մը չէր կրէր. սիրելով՝ ամէն բան շուտով կը մոռնար: Իր մահուան անկողնին մէջ իսկ տեղեկութիւն կ'ուզէր ընտանիքի մը մասին ուրոց մէջ անհամաձայնութիւն կար: Տէրը այս հոգին մեզմէ ամէն մէկուն պարգեւէ: Հոով. ԺԲ. 18, Մատթ. Ե. 9:

Գ. Ներդրումն ունեցաւ.— Մարդիկ որչափ ալ զինք վիրաւորին, մտքին մէջ չէր պահեր: Ներող հոգիով մը եւ սիրող սրտով մը վարուելով, յանցաւորին թէ զղջումը եւ թէ շիտկուիլը կ'ըստպասէր:

Դ. Բարեգործութիւն.— Այս մասին զովելի ընտրութեան տէր էր. աղքատաց հանգէպ շատ առատաձեռն էր եւ իր ըրած օգնութիւնը մեծ ուրախութիւնով էր: Ես ինքս այս մասին իրմէ դաս առած եմ: Երբեմն պատահած է որ հիւրերու ի պատիւ բացառիկ եւ աւելի ծախսեր ընենք. այսպիսի պարագաներուն՝ նա կ'ըսէր, երանի՜ թէ այս եղած ծախսը աղքատի մը տալինք, որչափ աւելի լաւ պիտի ըլլար: Դուկ. ԺԴ. 12-14: Իրաւցնէ արգարներուն յարուստիւն առած ատենը փոխարէնը անոր պիտի հատուցուի:

Ե. Համբերութիւնը ու լուծութիւնը.— Այս կէտերուն մէջ լաւ նկատի առած եմ. երբ թէ հոգեւոր եւ հիւրերով այցելութիւններու մէջ հաւաքովիներ եւ խօսակցութիւններ ունէինք՝ ամենէն աւելի լուռ կեցող եւ համբերողը ինքն էր: «Աղէկութեան վրայով ալ լռեցի» ըսող Դավիթ ընկերն էր (Սաղ. ԼԹ. 2, Յակ. Ա. 4):

Ձ. Դէմքին ժպիտը.— Միշտ ժպտադէմ էր: Շատ հազուադէպ էր որ դէմքը արուած ըլլար: Երբ մեծ տրտմութեան պատճառ մը ունենար, անմիջապէս իր դէմքը կը յայտնէր զայն, բայց այս ալ շուտ կ'անցնէր: Ծշմարիտ է թէ դէմքին ժպիտը սրտին խաղաղութենէն յառաջ կուգայ: Երբ սիրտդ տրտում եւ վշտալի է, դէմքդ ալ արուած կ'ըլլայ:

Ի. Հաւատացեալներուն միաբանութիւնը.— Բոլոր Աստուծոյ գաւակներուն միաբանութեանը համար ջանք կը թափէր ու ծախս կ'ըլլար: Հետեւեալ խօսքերը կրնան ամփոփել եւ յայտնել այս կէտին վրայ անոր տեսակէտը, «Ներկայիս



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՕԳՈՍՏ. 2.—

ՓԻԼԻՊՊՈՍԻ ՄԻՍԻՈՆԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ
Դաս Գ. Առաք. Ը. 26-40

Կարգալ Մատթ. ԺԳ. 3-9:

Մեր դասին նիւթը եղող այս դէպքին մէջ Աստուծոյ փրկութեան ծրագրին հրաշալի եւ մանրամասն մէկ նմոյշը եւ կերպը կը տեսնենք:

1. Հաւատարիմ եւ հնազանդ աշակերտ մը փիլիպպոս: Թէեւ ողորմութիւն մատակարարելու գործին համար որոշուած՝ (Գ. Առաք. 2. 1-7), բայց Ստեփանոսի նման Փիլիպպոս եւս «Քրիստոսը կը քարոզէր» (Ը. 3. 12, 33, 40): Մեր օրե-

րու կարգ մը եկեղեցիներու մէջ գոյութիւն ունեցող «արտաքին հոգաբարձութեան» անդամ մըն էր Փիլիպպոս: Բայց սեղաններու ծառայութիւն ընելին (2. 2) պատրուակ մը չէր որ այդ հոգաբարձութեան անդամները անապաշխար եւ կամ «կէլիշի կիւղէլ» հոգեւորներ ըլլային, հապա անոնք ըլլալու էին «բարի վկայուած, հոգևով Սրբով եւ իմաստութիւնով լեցուն» (2. 3) մարդիկ: Եւ արդիւնքը կը տեսնուի Ստեփանոսի կամ Փիլիպպոսի կեանքերուն մէջ:

2. Փրկութեան ծարաւ անկեղծ հոգի մը, Եթէ. ուղիւսին Ներքինին: Աստուած հաւատարիմ, հզօր եւ հրաշալի Փրկիչ է բոլոր անոնց որ Աստուծոյ կը ցանկան (Սաղ. 72. 14): Տէրոջը սրտի խառնուք պատճառով (Յայտ. Գ. 16) շատ մը հոգիներ, որոնք իրենց գաղջութիւնը, սակարկող, աշխարհասէր կեանքերուն այս կամ այն բանը պատճառ ու պատրուակ կը բռնեն՝ շատ պիտի ամօշնան դատաստանի աթոռին առջեւ երբ իրենց ներկայ կեղծաւորութեան քօղը վերցուի՝ եւ տեսնուի թէ զանոնք գալթակողեցնող գլխաւոր պատճառը զուրսէն չէ՝ հապա ներսէն: Վասնզի անոնք երբեք անկեղծօրէն եւ բոլոր սրտով եւ բոլոր անւձով ու բոլոր մտքով չսիրեցին զԱստուծոյ եւ չուզեցին Աստուծոյ փրկութիւնը (Մատթ. ԻԲ. 37):

3. Փրկութեան խօսքը (Գ. Առաք. Ը. 30-35): «Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է» (Յայտ. ԺԺ. 10): Աստուծոյ խօսքին անկեղծ ընթերցումը անպատճառ Յիսուսով փրկութեան կ'առաջնորդէ. Սաղ. ԾԺԺ. 18, 72. 45, Գ. Առաք. ԺԶ. 14, ԺԷ. 11, Ա. Թեա. Բ. 4, 13, «Իսկ եթէ մեր Աւետարանը ծածկուած ալ է, կորսուածներուն մէջ ծածկուած է, որոնց մէջ այս աշխարհի աստուածը անհաւատներուն միտքերը կուրցուց» (Բ. Կոր. Դ. 4):

4. Ս. Հովսէփին տուջնորդութիւնը (Տ. 29): Այս կէտը այնքան յաճախ եւ յատկօրէն երեւան կուգայ Գ. Առաք. մէջ, որ այս գիրքը ոմանք կը կոչեն նաեւ «Գործք Հովսէփ Սրբոյ»: Փնտռէ ու աղօթքով սերտէ այս նման համարներ, Գ. Առաք. Ժ. 19, ԺԳ. 2, ԺԵ. 28, ԺԶ. 6, 7, եւն:

5. Սքանչելի փրկիչը—«կը հաւատամ Թէ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ է» (Տ. 37): Այս հաւատքը ու այս խոստովանութիւնը փրկեց այս մարդը որ հակառակ իր հարստութեան, պատիւին, զիրքին եւ հրէական բարեպաշտութեան, կը խոստովանէր թէ ինքը խեղճ ու մեղաւոր կորսուած մըն էր: Ամէն հաւատացեալ պարտի ուրիշ շատ մը հատուածներու կարգին գոց սորվիլ նաեւ Գ. Առաք. Դ. 12ը:

հաւատացեալներու միջեւ ամենէն մեծ ցաւ պատճառող բանը բաժանումներն են: Եթէ վարդապետական կէտերու վրայ եւ հոգեւոր կեանքը ապրելու մէջ տարբերութիւն մը չկայ, բաժնուիլը ոչ մէկ պարագայի տակ շիտակ չըլլար: Այս կէտին մէջ թշնամին ներկայիս մեծ արագութեամբ կ'աշխատի: Այս դարուն մէջ, Սատանան զիտնալով թէ քիչ ժամանակ ունի, իր ամենէն մեծ խորամանկութիւնը գործածելու վրայ է, ապրկա է հաւատացեալները իրարմէ բաժնել: Սատանային ինչ հոգն է երթալ եւ մէկիկ մէկիկ հոգիները մոլորեցնել, անիկա աղբիւրը իր ակէն կը կտրէ՝ հաւատացեալները իրար ձգելով եւ Աւետարանին վկայութիւնը դանդաղեցնելով. այն ատեն նա իր նպատակին կը հասնի: Տէրը Իր բոլոր զաւակներն ու այս ցաւալի վիճակներէն ազատ պահէ: Աստուծոյ խօսքն ալ մեզի կը յանձնարարէ արթուն եւ զգաստ կենալ (Ա. Պետ. Ե. 8):

Իմ սիրելի կենակցիս ամբողջ փափաքը այս էր: Տէրը բոլոր հաւատացեալներուն մէջ այս ջանքը երեւան բերէ: Ամէն:

ՄԱՐՏԻՐՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ
(Հաճի եղբայր)

Սէն Լու,

Մարտի 1

6. փրկութեան հազարադուրիները — մկրտութիւն: «Ահա ջուր, ալ ի՞նչ բան զիս կ'արգիլէ մկրտուելէ» (Տ. 36): Նոյն այս հարցումը կրնան ընել ինքզինքնուն այսօր շատ մը հաւատացեալներ որոնք թերեւս քանի տարիներէ ի վեր ապաշխարած են, բայց Տէրոջը առջեւ եւ մարդոց առջեւ հնազանդութեան այս քայլը դեռ չեն առած. դեռ բան մը, պատճառաբանութիւն մը, իրենց շատ խելացի տրամաբանութիւնը եւայլն զիրենք կ'արգիլէ մկրտուելէ: Ծօրճ Միւլըրը մկրտուելէ արգիլող իր վերջին պատճառաբանութիւնը եւ իր պատասխանը պարզ եւ հետաքրքրական է. — առարկութիւն. «Եթէ նոյնիսկ չափահասներու մկրտութիւնը Սուրբ Գրային է, քանի որ ան պէտք է ապաշխարութենէ անմիջապէս յետոյ ըլլայ՝ ինչ համար այլեւս մկրտուիլ շատ ուշ է»: Պատասխան. «Ես պատասխանեցի, «Տէրոջը հրամաններուն աւելի լաւ է ուշ հնազանդիլ քան թէ երբեք չհնազանդիլ»:

ՕԳՈՍՏ. 9. —

ՍՕՂՈՍԻ ԴԱՐՁԸ ԵՒ ԿՈՉՈՒՄԸ

Դաս Գ. Առաք. Թ. 1-9, 17-19, Ա. Տիմ. Ա. 12-14
Կարդալ Եսայ. 2. 1-8:

Այսօրուայ դասին ոսկեղէն համարը կ'ամփոփէ իր մէջ Պօղոսի կեանքին գաղտնիքը. «Այն երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ ես» (Գ. Առաք. ԻԶ. 19): Անհնազանդ չեղայ բառերուն տակ կարելի է համարել մեզի ծանօթ շատ մը չարձաբանքներ: Տէրը Ինքը կ'ըսէ, «Ես անոր պիտի ցուցնեմ թէ որչափ պէտք է իրեն իմ անուանս համար նեղութիւն կրել»:

Այսօրուան շատ մը հաւատացեալներս ալ թերեւս քիչ մը պակաս համարձակութեամբ՝ թէեւ կ'ըսենք «անհնազանդ չեղայ», բայց հնազանդութիւն եւ անհնազանդութիւն բառերը մեր մօտ կորսնցուցած են այն իմաստը որ Տէրը կուտայ իր սուրբ խօսքին մէջ, իր անցեալի սուրբերուն կեանքին մէջ: Մեր օրերուն շատ «ուղեղ» կը գործածուի, շատ մեկնութիւն, շատ քաջքոտութիւն: Եթէ հաւատացեալ մը իրեն գործին չեկած եւ հնազանդիլ չուզած մէկ Սուրբ Գրային հրամանին առջեւ զնե՞ս՝ քեզի կ'առարկէ թէ ատար մեկնութիւնը ուրիշ հաւատացեալներ ուրիշ կերպ կուտան:

Ճշմարիտ հնազանդութեան ի՞նչ հրաշայի պատկերներ կը տեսնենք հին ժամանակուայ հաւատքի հսկաներուն մօտ:

«Հաւատքով երբ Աբրահամ կ'անչուեցաւ, մը-

տիկ ըրաւ... եւ ելաւ գնաց ու չէր գիտեր թէ ուր կ'երթայ... հաւատքով... Իսահակը պատարագ մատուց եւ ան որ խոստմունքները առած էր, իր մէկ հատիկ որդին կը մատուցանէր...» (Եբր. ԺԱ. 8, 17):

Մեր դասին 15րդ համարին մէջ Տէրը Սօղոսի համար կ'ըսէ «անիկա ինծի ընտիր ամանն մըն է»: Յետագային առաքեալը ինքն ալ գրեց ամաններու առակը գործածելով:

1. Սօղոս ի սկզբանէ անմաքուր աման մըն էր: (Հմր. 1, 2, Ա. Տիմ. Ա. 13, Գ. Առաք. ԻԶ. 11): Տէրոջը ձեռքին մէջ ընտիր աման մը դառնալէն առաջ՝ Սօղոս Սատանայի ձեռքին մէջ անոր ամենէն ընտիր ամաններէն մին էր: Սօղոսին դարձէն անմիջապէս յետոյ յիշուած Գ. Առաք. Թ. 31էն կարելի է գրեթէ այսպէս ալ հետեւցնել թէ «Սատանան Սօղոսը ձեռքէ փախցնելէն յետոյ՝ անոր տեղը բռնող յարմար աման մը անմիջապէս չկրցաւ գտնել:

2. Սօղոս կոտրած աման մը եղաւ: (Տ. 3-6): Այն վայրկեանին երբ Սօղոս Յիսուսը «Տէր» կոչեց, ինքզինքը գերի ըրաւ: Փիլ. Գ. 4-6ի գոռոզ փարիսեցիին կոտորուած, փշուրուած էր հոգևով եւ մարմնով Դամասկոսի ճամբուն վրայ, այն Յիսուսի ոտքերուն տակ՝ գոր ցարդ կը հալածէր արինարբու թշնամիի մը պէս (Սաղ. ԾԱ. 17):

3. Սօղոս ընտիր (ընտրուած) աման մը եղաւ: (Տ. 15): Վկայելու Գ. Առաք. ԻԲ. 15: Ծնորհք ընդունելու եւ տարածելու, Ա. Տիմ. Ա. 14-16:

4. Սօղոս Սուրբ Հոգիով լեցուած աման մը եղաւ: (Տ. 17): Սօղոսի մօտ այս լեցուիլը անոր ապաշխարութեան ընկերացաւ. երկրորդ եւ տարիներու անցնելէն յետոյ եղած փորձառութիւն մըն ալ չէր եղած, ոչ ալ տքնութիւնով, անձ նազրկումով եւն: Միակ պայմանն (ինչպէս Գ. Առաք. մէջ ուրիշ շատերու մօտ) էր որ հաւատացեալները զրաւուած, յափշտակուած, լեցուած էին Տէր Յիսուսի հանդէպ սիրով, եւ Սուրբ Հոգին բնական կերպով եւ դիւրին ճամբայ մը ունէր լեցուելու սիրտերուն մէջ:

5. Սօղոս չարչարուող աման մը եղաւ: (Տ. 16): Այս մարգարէութիւնը լման կերպով կատարուեցաւ: Բ. Կոր. ԺԱ. 24-33, Բ. Տիմ. Դ. 16-18:

Առաքեալը այս չարչարանքը շնորհքի⁽¹⁾ գերզանց չափ մը կը նկատէ Փիլ. Ա. 29:

.....

(1) ձիշտ այսպիսի խօսքի մը յարակցութեամբ Յուլիոս 26ի դասին մէջ, (Էջ 108) տպագրական վրիպակով մէկ գրի տարբերութեամբ խորհուրդի մեծ սխալ մը սպրդած է. «չարչարուիլ» շնորհքէ աւելի մեծ չափ մը: Ես բառը պէտք է կարդալ՝ Շնորհքի:

ՕԳՈՍՏ. 16.—

ՅԱՆՆԷԼ ԵՒ ՀՆՁԵԼ

Դաս Գաղ. 2. 1-10

Կարգալ Գաղ. Ե. 16-24

Մեր դասը դէմ առ դէմ կը դնէ յանցաւոր հաւատացեալի մը կեանքը եւ հոգեւոր հաւատացեալի մի կեանքը, եւ հոգեւորին կը թելադրէ որ յանցաւորին հանդէպ ու նաեւ հոգեւորը ինքն իր ներքին կեանքին մէջ ու աշխարհի մարմնի ու մեղքի հանդէպ այնպիսի քրիստոսանման կեանք մը ապրի, որ յանցաւորին յանցաւորութիւնը աւելի յստակօրէն յայտնի ըլլայ անոր եւ ամէնէն զայն: Իրաւցնէ հոս կայ մէկ կողմէն Ս. Հոգիով լեցուած կեանք մը, հեղութեան, ծառայութեան, անձնութեան, անձնաքննութեան, առատաձեռնութեան, Աստուածպաշտութեան, Հոգիով քալելու իմաստութեան, հաւատքի, բարեգործութեան յարատեւութեան, եղբայրսիրութեան եւ սիրոյ կեանք մը: Եւ հոգեւոր այս զանձերը առաքեալը կը պատուիրէ ի սպաս դնել նախ յանցաւոր եղբոր հանդէպ, յետոյ ինքզինքնու հանդէպ, իրարու եւ ամենուն հանդէպ:

Հակառակ կողմի ցանկն ալ շինենք. (չմոռնանք թէ հաւատացեալները, փրկուածները եղբայրներն են որ այս մեղքերէն կ'զգուշացունին) յանկարծ բռնուիլ (այսինքն զաղտնի գործել) ինչ եւ իցէ յամոքանքով անզգուշութիւն, ինքզինք բան մը ըլլալ սեպել ու չըլլալ (իր անձը խաբել), անկանոն, անհաշիւ, անձնական, անհոգ կեանք մը եւ միայն ուրիշին կեանքովը պարծենալ, Աստուած ծաղր ընել, մարմինին սերմանել ու ապականութիւն հնձել, բարի գործելէն ձանձրանալ ու թուլնալ:

Եւ հիմա այս երկու ցանկերէն ո՞րը պիտի ընտրես դուն ով Յիսուսի աշակերտ:

ՕԳՈՍ. 23.—

ԱԻԵՏԱՐԱՆԸ ԲՈՂՈՐ ՄԱՐԴՈՅ

Դաս Գ. Առաք. ԺԱ. 5-18: Հոգ. Ա. 15-17

Կարգալ Եսայ. ԺԱ. 1-5:

Գ. Առաք. Ժ. գլխաւոր մեզի համար կարեւոր հատուած մըն է: Քրիստոսի եկեղեցին որ զլիաւորաբար հեթանոսներէն պիտի ընտրուէր, կ'ըսէին այս զիւրուն 44-48ի մէջ, ու Պետրոս հոն ժողովուածներուն համար կ'ըսէ, «ստոնք... Ս. Հոգին ալ ընդունեցին մեզի պէս»: Կոռնելիոսի դարձով սկսաւ կատարուիլ հետեւեալին նման մարգարէութիւններ, Ծնդ. ԺԲ. 3, ԻԲ. 18, ԻԸ. 14, եւն:

Հեթանոսներուն համար Աստուծոյ ծրագիրը

յստակօրէն յայտնուած է Գ. Առաք. ԺԵ. 8, 9, 14 եփես. Բ. 11-Գ. 12ի նման հատուածներուն մէջ:

Մեր դասին հատուածներուն մէջ նկատելի է թէ 1. Այս գործը աղօթքով սկսաւ, հ. 5: 2. Երկնային կրկնակի տեսիլքով յայտնուեցաւ, հ. 5-10, 15, 14: 3. Աստուծոյ հրամանով սկսաւ, հ. 12: 4. Հնազանդ աշակերտի մը հնազանդելովը սկսաւ, հ. 12: 5. Փրկութիւնը փնտոող անկեղծ անձով մը սկսաւ հեթանոսներէն կազմուելիք եկեղեցին, հ. 15, 14: 6. Աստուծոյ խօսքին քարոզութիւնովը եղաւ, հ. 15: 7. Յիսուս Քրիստոսի արիւնովը սկսաւ Գ. Առաք. Ժ. 39, 40, 43, Ի. 28 (մահը եւ յարութիւնը): 8. Աստուած այս գործին Իրմէ ըլլալը վկայեց ա. փրկելով հ. 17, բ. Ս. Հոգիով կնքելով հ. 15: 9. Նկատելի է նաեւ թէ մարգարէական վկայութիւնն ալ կարեւոր տեղ ունէր, հ. 16, Ժ. 43: 10. Այս գործը չկատարողը Աստուծոյ դէմ դրած պիտի ըլլար հ. 17 (այսօր ալ նոյնպէս է քեզի եւ ինծի համար):

Այս գործը դեռ կը շարունակուի այսօր Աստուծոյ կողմանէ հնազանդ եւ ընտիր ամաններու գործածումովը (Գ. Առաք. Թ. 15, Ե. 32, Զաք. Գ. 6): Դուն Աստուծոյ ձեռքին մէջ ընտիր ամա՞ն մըն եւ Բ. Տիմ. Բ. 21:

ՕԳՈՍՏ. 30.—

ԱՇԽԱՐՀԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ՈՒԹԵԱՆ ՍԿԻՉԲԸ

Դաս Գ. Առաք. ԺԱ. 19-24, ԺԳ. 1-12:

Կարգալ Եսայ. ԽԲ. 6-10

«Յիրուցան եղածները»: Այս ցրումը Գ. Առաք. Ը. 1ի մէջ մեր կարգացած հալածման արդիւնք ցրումն է: Կրակարանի մը մէջէն բոլորովին կըրակ կտրած վառած ամուսնները ցիրուցան ընել, կը նշանակէ անոնցմէ ամէն մէկուն ինկած տեղը հրդեհի մը սկսիլը: Կէս վառած կամ մարած ամուսններ երբ ցրուին շատ մեծ փառ չեն տար ու իրենք ալ քիչ ատենէն կը մարին, կը պաղին ու կը սեւնան: Երուսաղէմի եկեղեցւոյն անդամները ամէն ուր որ քշուեցան՝ հոն իրենց ընտիր ըլլալուն փորձը տուին: Ամէն մէկ անգամ քարոզիչ մը դարձաւ եւ ամէն մէկ տեղ՝ մէյսէկ քարոզաւոր: Սատանան ծրագրեց զանոնք ցրուելով կորսնցնել, իսկ Տէրը ծրագրեց զանոնք ցրուելով գործածել: Թէեւ անոնք հալածանքին առջեւէն փախան, բայց իրենց կոչումէն, իրենց հաւատքէն ու ծառայութենէն փախուստ չտուին:

Մեր դասով եկեղեցւոյ կեդրոնը, մայրաքաղաքը Երուսաղէմէն Անտիոք կը փոխադրուի, իսկ մարդկային առաջնորդութիւնը Պետրոս առաքեալէ կ'անցնի Պողոսի (արեւմուտքի համար):

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՋ

○○○○○

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Առանց զաւակի տունը լման տուն մը չէ: Կըրկին մեր երգչախումբի օրինակը առնելով, պիտի ըսեմ թէ անիկա երգչախումբ մըն է ուր ձայններ կը պակսին, եւ թերեւս ամենէն զուարթները: Կը կարեկցինք այն տուներուն, որոնք այս տըխուրթիւնը գիտեն, երբ ծնողք Աստուծոյ առջեւ յանցաւոր չեն: Հոս տեղը չէ խօսելու այն կարգ մը վարդապետութեանց մասին, որոնք ճիշդ կեանքի ազին կը փնտսեն: Բայց Աստուած պիտի դատէ մարդոց զաղտնի գործերը:

Զաւակներ ունենալը ուրախութիւն է, նոյն-

Գ. Առաք. ԺԳ. 1-ի մէջ Մանայէնի անուան հետ պզտիկ մանրամասնութիւն մը յիշուած է, «Հերովդէս չորրորդապետին սննդակիցը»: Ինչ հակապատկեր այս հոգիներուն մէջ, որոնց երկուքն ալ իբր մանուկ սննդակից եղան, յետագայ տարիներուն մէջ երկուքն ալ Յիսուսի հետ գործ ունեցան (Ղուկ. ԻԳ. 11), իսկ հոս, նախորդ գլխուն մէջ մէկուն զժողայրին վախճանը յիշուելէ անմիջապէս յետոյ (ԺԲ. 20-23) միւսին անունը կը յիշուի Աստուծոյ փառք տուող պատուականներու կարգին:

Նկատէ այս դասին մէջ Հոգւոյն Սրբոյ մոտերիմ, յստակ, անձնական յարաբերութիւնները հաւատացեալներուն հետ: Միսիոնարները պարտին ըլլալ.— Հոգիէն ծնած Յովհ. Գ. 3, Հոգիով լեցուած Եփես. Ե. 18, Հոգիէն պարգեւներ առած Ա. Կոր. ԺԲ. 7-11, Հոգիէն առաջնորդուող Հոով. Ը. 14, Հոգիէն կառավարուող Գ. Առաք. ԺԶ. 6: Մեր դասին մէջ յիշուած Եղիմաս մոզ, կրնայ իր անհատական կուրութեամբը օրինակ մը ներկատուիլ հրեայ ազգին.—

Ան դէմ կեցաւ քրիստոնեաներու ԺԳ. 8, Ան ուղեց Տէրովը շիրտակ ճամբաները ծոել հ. 10: Ան կոյր եղաւ աստեմ մը հ. 11 (Հոով. ԺԱ. 23):

Հետեւողութեամբ

Վ. Ս.

Իսկ աղքատիկ տուներուն մէջ: Նորածինի մը զալուստը, հարսանեկան նոր հանդէսի մը նման է, որ ամուսինները կ'միացնէ նոր եւ կենդանի կապով մը: Մինչեւ այդ ատեն լուռ մնացած լարերը կը սկսին թրթռալ ծնողաց սրտին մէջ: Անոնց համար կեանքը նոր եւ խորունկ նշանակութիւն մը կ'ունենայ: Այս նոր եւ նուիրական բեռը որ իրենց ձեռքերուն յանձնուած է, այս անմահ կեանքը որ իրենց վստահուած է քիչ մը ժամանակուան համար, ծնողաց մտքին մէջ կ'արթնցնէ պատասխանատուութեան գիտակցութիւնը որ խորհիլ կ'ուստայ:

Ըսինք որ ընտանիքը մասնաւորապէս սրտին զպրոցն է: Մերտը բարոյական էութեան բերդը ըլլալով միւս կողմէ այն վստահութիւնը թէ մանկութիւնը եւ երիտասարդութիւնը նկարագրին վրայ անշնչելի հետքեր կը դրօշմեն, կը հասկնանք թէ որքա՞ն մեծ է ծնողաց պատասխանատուութիւնը: Թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարանները մեծ պատասխանատուութիւն մը կը դնեն ծնողաց ուսերուն վրայ Բ. Օրին. Զ. 5-9, Եփես. Զ. 4:

Այս համարները հօրը եւ մօրը բաժինն է որ կը յիշեն: Հայրեր կան, որ անանկ կը թուի թէ կրթութեան նուիրական պարտականութիւնը միայն մօրը կը ձգեն. անոնք կ'ապրին գրեթէ այնպէս որպէս թէ տունը իրենց համար միակ ուտելու, քնանալու, խնամուելու վայրը ըլլալ: Հայրը իր ամենալաւ ազգեցութիւնն է որ կը պարտի իր ընտանիքին: Ըշմարիտ է թէ կերպով մը մայրն է որ տունը կը նկատուի. իրաւ է թէ ընդհանուր կերպով մայրը աւելի մօտ է զաւակին հոգւոյն քան հայրը: Մօրմէն է որ ան կը ռաւնայ առաջին տպաւորութիւնները: Այսու հանդերձ, ամբողջ Ս. Գրքին մէջ հայրը նկատուած է որպէս տանը գլուխը: Բայց ատիկա, անհրաժեշտ թարձրագոյն իշխանութիւն ըսել չէ, այլ պատասխանատուութեան առաջնութիւն: Ընտանիքին ամենէն նուիրական շահերուն հոգածութիւնը մասնաւորապէս հօրը ձեռացը մէջ է: Ուստի ինչպէս մօրը, նոյնքան ալ հօրը կը վերաբերի կաղապարել այն կակուղ խմորը, որ է մանկան սիրտը: Մեր զաւակները իրենց ամբողջ կեանքի ընթացքին բան մը պիտի տանին իրենց հետ, մեր տանը եւ մեր ինչ ըլլալէն:

Մանուկին դաստիարակութիւնը մասնաւորապէս օրինակով է որ կ'ըլլայ: Մեր որպէս քրիստոնեայ ծնողք տուած վկայութիւնը, մեր ինչ պիտի քրիստոնեաներ ըլլալէն կախում ունի:

Նախապէս պէտք է որ ծնողները միացած ըլ-

լան, դայա նախապէս ըսինք: Եթէ ծնողք ասիկա չեն իրականացներ, թող իրենց զաւակներէն չի զանգատին, թող չսպասեն որ անոնց Տէրոջը ճամբաներուն մէջ քալելը տեսնեն, վասնզի անոնք ինքնիրեննին չեն քալեր անոնց մէջ: Եթէ ամենէն առաջ ծնողք Աստուծոյ հնազանդելու մէջ մէկ չեն, ընտանիքը անհամաձայնութեան մէջ պիտի ապրի եւ օրհնութենէ զրկուած պիտի ըլլայ: Եթէ շարունակ անհամաձայնութիւն եւ զփութութիւն կայ ծնողաց միջեւ, անտարակոյս պիտի տեսնեն որ իրենց զաւակները այս բանին մէջ զիրենք ընդօրինակած են: Երգչախումբին ձայն տողները ծնողքն են, եթէ ձայնը սխալ է, երգչախումբը սխալ պիտի ըլլայ: Եթէ ծնողաց միջեւ սիրալիբ հանգամանք, անուշ վերաբերում, համաձայնութիւն կայ, նոյն հոգին է որ պիտի թաղարեւէ ամբողջ ընտանիքին մէջ: Իրենց զաւակներուն համար՝ քրիստոնեայ ծնողքները ամենէն առաջ պէտք է իրենց նկարագիրը, իրենց ներքին կեանքը մշակեն, որպէսզի մէկտեղ Աստուծոյ ծրագրին համեմատ ապրին: Ընտանիքին կեանքը դայա ընտանիքներուն կեանքէն աւելի աղէկ չկրնար ըլլալ:

Պէտք է միութիւն եւ համաձայնութիւն ըլլայ զատարարակութեան մէջ (համաձայնութիւն՝ տրուելիք արտօնութեանց կամ արգիլուելիք բաներու մէջ): Եթէ մայրը կ'արտօնէ հօրը արգիլածը եւ փոխադարձաբար, ինչ աղէտալի բան: Մանուկը շուտ մը պիտի հասկնայ թէ որո՞ւ պէտք է դիմէ իր քմահաճոյքները յագեցնելու համար... եւ ատկէ պիտի սորվի նենգութիւն եւ կեղծաւորութիւն: Դատարարակութիւնը անյաջող պիտի ըլլայ:

Այր եւ կնոջ միատեղ աղօթելը, խորհելու եւ գործելու միութիւնը իրականացնելու պիտի օգնէ: Հայրեր եւ մայրեր, որքա՞ն կարեւոր է որ միասին աղօթէք ձեր զաւակներուն համար: Այսպէս կ'ընէ՞ք. չեմ համարձակիր խորհիլ թէ ասոր հակառակն է. սակայն եթէ այսպէս չէք ըներ, այսօրունէ սկսեցէք:

Ոսօք մը նաեւ զաւակները պատժելու կերպի մասին, վասնզի մեր պարտքն է զանոնք ուղղել Կող. Գ. 24, Եփես. 2, 4): Այս կէտին մէջ որքա՞ն ողբալի բաներ կան: Երբեք սպառնալիքներ կամ խոստումներ չընենք, զորոնք պիտի չկատարենք: Արտառոց սպառնալիքներ ալ ընելու չէ: Քանի մը շաբաթ առաջ թրէյնին մէջ, հայր մը եւ փոքր աղջիկ մը դիմացս նստած էին. աղջնակը շատ կրակոտ ըլլալով անդադար կը շարժէր: Հայրը անոր մի քանի դիտողու-

թիւններ ըրաւ, յետոյ յանկարծ ըսաւ, «Եթէ անգամ մըն ալ շարժիս, քեզ պատուհանէն վար կը նետեմ»: Եթէ համարձակութիւն ունենայի, այդ հօրը կ'ուզէի հարցնել թէ արդեօք հաշիւի կ'առնէ՞ր թէ ինչ կ'անցնէր իր փոքր աղջկան մտքէն կամ սրտէն այդպիսի սպառնալիք մը լսելուն: Եթէ մանուկը իր հօրը ըսածը լրջօրէն կ'առնէ (եւ պէտք է որ այդպէս ըլլայ) այն ատեն իր հայրը հրէշի մը տեղ պիտի դնէ եւ այլեւս անոր սիրոյն պիտի չկրնայ հաւատալ: Եթէ ըսածը լրջօրէն չառնիր, պիտի գիտնայ թէ հայրը սրտախօս է: Յետոյ, պէտք չէ զարնել կամ պօռալ ամէն բանի համար: Անտարակոյս պէտք է գիտնալ պատժել, չէ՞ որ գրուած է, «Տղայէն խրատը մի կտրեր, վասնզի եթէ զանիկա զաւազանով ծեծես՝ չմեռնիր»: Բայց պէտք է գիտնալ սիրով ծեծել, սէրը որ գործածուած սխալին համար վիշտ կը կրէ: Բնաւ պէտք չէ բարկութեան ատեն զարնել: Պէտք է հանդարտութեամբ, լրջօրէն խօսիլ զաւակին, ետքը ծեծել: Ձգալ թէ դարնող ձեռքը, սիրող ձեռք մըն է. այս չէ՞ Եփես. 2, 4ի պատուէրը կատարելուն կերպը: 25՝ որ այս կերպով է որ Աստուած մեղքը զարկաւ: Յիսուսի անձկութիւնը, ինքզինք սիրող Հօրմէն թողուած ըլլալը զգալն էր:

Քրիստոնեայ հօր մը (պատուելիի մը) իր որդւոյն տուած պատիժին պատմութիւնը լսեցի: Այդ որդին, որ դաժան բնութիւն մը ունէր, մասնաւորապէս անհնազանդ էր: Օր մը լուրջ խօսակցութենէ մը ետք, հայրը կ'ըսէ իր որդւոյն թէ, երեք գիշեր մինակը պիտի երթայ ձեղնայարկը պառկի: Առաջին իրիկունը հասնելուն, տղան կ'ելլէ իր առանձնարանը: Հայրը եւ մայրը հանգստանալու կ'երթան, բայց հայրը չի կրնար քնանալ: Քանի մը ժամ անքուն անցնելէ ետք, կ'ելլէ կ'առնէ բարձը եւ կամացուկ մը կ'ելլէ տղուն քով: Տղան ալ չէր քնանար: Հայրը անոր քով կը պառկի: Որդին այս բանը տեսնելով, որ հայրական սէրը կը փաստէր, սիրաւ կը փշրուի: Հեկեկալով կ'իյնայ հօրը բազկաց մէջ: Այդ որդին այսօր Զինաստանի մէջ միախոնար է: Ըստ Տէրոջը այս է ուղղելու կերպը, վասնզի Ինք ոչ թէ միայն մեր մեղքերէն չարչարուեցաւ, այլ մեր մեղքերուն համար չարչարուեցաւ:

Բ. Օրին. 2, 6: Այս պատուէրները քու սրտիդ մէջ ըլլան, ու զանոնք քու որդիներուդ կրկին անգամ սորվեցնես, անոնց վրայ խօսիս...: Ինչ որ ձեր սրտին մէջ է, ան է որ պիտի տպաւորուի ձեր զաւակներուն մէջ: 25ք կրնար տալ

ձեր գաւակներուն ինչ որ դուք չունիք: Ձեր գաւակները պէսք է ձեր սիրտը զգան: Եթէ ձեր սիրտը ուղիղ, անկեղծ եւ սիրող է, ուղղամտութեան, անկեղծութեան եւ սիրոյ սկզբունքներ պիտի տպաւորուին անոնց մէջ: Բայց եթէ ձեր սիրտը աղաւթն է, տասնէն ինը հաւանական է որ ձեր ուսուցումը պարապ ըլլայ:

Հայրեր կան որ բնդհանրապէս խիստ կերպով կը խօսին տանը մէջ, գործածելով միշտ իշխանական եւ կծու ոճ մը: Անանկները չեն կրնար իրենց գաւակներուն սորվեցնել որ յարգանք ունենան իրենց հանգէպ եւ իրենց մօրը հանգէպ:

Դուք կրնաք անոնց գեղեցիկ բաներ սորվեցնել, բայց եթէ մանուկը այս բաները ծնողաց կեանքին մէջ չտեսներ, զանոնք բաւական կարեւոր պիտի չնկատէ որ իր կեանքին մէջ ներգործեն: Ասիկա շատ տրամաբանական է, եւ մանուկները շատ կանուխէն տրամաբանող են:

Եթէ կ'ուզենք որ մեր գաւակները լաւ ըլլան, մենք լաւ ըլլանք: Եթէ կ'ուզենք որ անոնք ուղղամիտ ըլլան, մենք ուղղամիտ ըլլանք: Դաստիարակութեան մէջ սուտը բնաւ գործ պէտք չէ ունենայ, ոչ ալ նոյնիսկ սուտեր ըլլալու է կաղանդ Պապայի մասին: Եթէ կ'ուզենք որ անոնք մաքուր ըլլան, մենք մաքուր ըլլանք: Երկդիմի խօսքեր բնաւ պէտք չէ ունենանք: Մեր քրիստոնեայ տուններուն մէջ երբեք զէջ ընթերցում ըլլալու չէ:

Եթէ կ'ուզենք որ անոնք մարդասէր ըլլան, մենք մարդասէր ըլլանք: մարդասէր նախ մեր խօսակցութեանց մէջ: Մեր գաւակները ի՞նչ կը լսեն «ուրիշներու վրայ» մեր տուններուն մէջ: Ի՞նչ կը լսեն այն անձերուն վրայ որ մեզի համակրելի չեն: Մենք թշնամի պէտք չէ ունենանք բռնականաբար եւ դիւրաւ ալ կ'ըսենք թէ չունինք, բայց իրականին մէջ որքա՛ն տխուր բաներ նշկատելի են: Երբեմն ընտանիքներու մէջ հակառակութիւններ կան որոնք սերունդէ սերունդ կը փոխանցուին մեծաւ մասամբ տանը մէջ լսուած խօսակցութիւններէն: Սեղանի վրայ եւ ամէն տեղ, ուրիշներու մասին, ուրիշ քրիստոնեաներու մասին սիրով կը խօսինք: Եթէ լսելիք որ ծնողներ մարդակեր դարձեր են եւ իրենց գաւակները կը սնուցանեն իրենց նահատակած դրացիներուն մարմիններովը, պիտի ըմբոստանայինք, ի՞նչ վաշտութիւն պիտի ըսէինք: Երբ տանը մէջ ուրիշներու մասին զէջ կը խօսինք, նոյնքան յանցաւոր ենք, կրկնակի յանցաւոր ենք: Ուրիշներուն չարիք կ'ընենք, նաեւ մեր



ՊԱՏԱՆԵԱՑ

ԼՄԱՆ ԹՈՂՈՒԹԻՒՆ

Երանի՛ անոր, որուն յանցանքներուն թողութիւն եղաւ ու անոր մեղքերը ծածկուեցան:
Սաղ. ԼԲ. 1

Ձմեռնային եղանակը սկսած էր: Եկեղեցիին մէջ ամէն օր ժողովներ կ'ըլլային, աւետարանչական ժողովներ, որոնց կ'առաջնորդէր հովիւին մասնաւոր հրաւերովը եկած աւետարանիչ մը: Այդ ժողովներուն մէջ շատեր ճանչցան իրենց մեղաւոր ըլլալը եւ իրենց մեղքերը խոստովանելով Աստուծոյ թողութիւն եւ փրկութիւն խնդրեցին ու ընդունեցին: Նոյն իսկ եկեղեցիին մէջ հոգեւոր կարծուած եւ լուրջ անձնաւորութիւններ, հոգաբարձուներ, ուսուցիչներ կը խոստովանէին թէ իրենց կեանքը փոփոխութեան մը եւ արմատական փոփոխութեան մը պէտքն ունէր: Այսպէս ամէն ոք, մեծ եւ պզտիկ, որոնք կը յաճախէին այդ ժողովներուն, յանդիմանուելով Սուրբ Հոգիին քաղցր շունչէն, Աստուծոյ ներկայութեան սրբութենէն, կ'երթային հարթարելու, ինչ որ անցեալին մէջ սխալ եղած էր, ինչ որ դեռ անվճար կը մնար, ինչ որ Աստուծոյ եւ մարդոց առջեւ կարգադրուած չէր: Այսպէս, նոր շարժում մը, նոր կեանք մը սկսած էր քաղաքին մէջ ու նոր շունչ մը կը փչէր ամէն տան ու անհատի վրայ: Մ. քաղաքին մէջ գեղեցիկ արթնութիւն մը սկսած էր: Ու երբ Աստուծոյ Հոգին տեղի մը մէջ կ'սկսի գործել ո՛վ կրնայ դիմանալ Անոր տաքութեան առջեւ:

գաւակներուն: Եթէ տխրեցուցիչ, ցաւ պատճառող բաներ կան որ այդ ու կին իրարու կ'ուզենք իմացնել, սպասենք որ միմեկ ըլլանք: Վիշտ կրելով խօսինք այդ ուղղութեամբ, յետոյ զայն աղօթքի նիւթ ընենք:

Ընտանեկան հոգի մը կայ որ ընտանիքին մէջ սեղանի վրայ կամ ուրիշ տեղ եղած խօսակցութիւններէ երեւան կուգայ. թող ատիկա սիրոյ հոգին ըլլայ:

Այս բանին վրայ հսկենք, որպէսզի մեր տուները Աստուծոյ ուզած սիրոյ դպրոցը ընենք:

(Շար.)

Թարգ. Ի. Յ. ԱՐԲԱՆՍԵԱՆ

Սէնթ Էթիէն

Ազնիւ ու բարեկեցիկ ընտանիքի մը մէկ սիրելի զաւակը, Օննիկ ալ կը յաճախէր այդ ժողովներուն: Եւ ամէն անգամ արտասովոր զգացումներով լեցուն տուն կը վերադառնար, քանզի որքան ժողովներ կը շարունակուէին, օրէ օր նոր անձեր կ'ելլէին կը խոստովանէին իրենց մեղաւորութիւնը եւ կը յանձնուէին Փրկչին, որ կ'ընդունէր զանոնք: Ու անոնք կը փոխուէին, կը փոխուէին կեանքով, լեզուով, գործով: Օննիկ կը մտածէր երբեմն, թէ կարգը իրեն եկած էր, բայց ինչո՞ւ, միւսները մեծ էին, ծերունիներ, չափահասներ, երիտասարդներ, նոյնիսկ իրմէ 2-3 տարի աւելի մեծ պատանիներ: Ուրեմն ի՞նչ պէտք կար ապաշխարութեան, աւելի լաւ չէ՞ր ըլլար քիչ մըն ալ, մէկ երկու տարի ալ սպասել եւ միւսներուն չափ ըլլալ, աւելի սորվիլ ու անկէ վերջը ապաշխարել: Այս խորհուրդները իրարու ետեւէ իր միտքը կը խաչաձեւէին, բայց ամէն անգամ որ նա ժողովէ մը դուրս կուգար, կ'զգար թէ ինքը պարտք մը կատարած չէր եւ թէ Ս. Հոգին տրտմած էր իրեն համար: Սրտին մէջէն քաղցկաշունչ ձայն մը կ'ըսէր իրեն, Օննիկ, պէտք է դուն ալ ապաշխարես: Այո՞, կ'ըսէր Օննիկ, այս երեկոյ, եւ երբ իրիկունը ժողովին մէջ դողաշունչ ծունկերով եւ սեղմուած սրտով մը կ'սպասէր որ մէկուն աղօթքը լմնալէն հտքը ինք ելլէր այսու ամենայնիւ անոր «Ամէն»ին ինք շնչահեղձ, ա՛լ անկարող կը դառնար կանգնելու, եւ կարծես ստիպուած էր սպասել եւ ոյժ հաւաքել յաջորդին ետեւէն ոտքի ելլելու: Այս կերպով ժողովները կը վերջանային եւ Օննիկ իր անհամարձակութեան պատճառաւ իր ապաշխարութիւնը մէկ ժողովէն միւսին կը ձգէր: Նա դեռ նոր բոլորած էր իր 14 գարունները, ու թէն լուրջ տղայ մըն էր, գովելի ամենէն, ուսուցիչէն եւ եկեղեցիի հովիւէն, թէն իր դրացիները միշտ բարձր զաղափար ունէին իր մասին եւ կը հիանային այն մօրը վրայ որ կարողացած էր իրեն պէս տղայ մը կրթել, սակայն ինք անձամբ գիտէր թէ իրեն ներքին փոփոխութիւն մը պէտք էր, ու պէտք էր ա՛յդ օրերը: Ո՞վ գիտէ թերեւս ուրիշ ատեն ալ պատահութիւն չըլլար իրեն:

Ու առաւօտ մը, ա՛խ, ի՛նչ օր էր ան, նա կրկին ժողովի կ'երթար, բարի որոշումով մը, բայց միանգամայն տրտում, քանզի իր քաջութեան վրայ վստահութիւն չունէր: Կը խորհէր թէ նորէն իր ամէկուտութիւնն ու դողը բռնէ, ուրիշներ ելլեն աղօթեն, Փրկիչը խնդրեն, փրկուին, բայց ոչ ինք: Տէրը սակայն տարբեր կարգադրած էր: Սեւտարանիչը այդ օր ազդու եւ կտրուկ քարոզէ

մը յետոյ կոչ կ'ընէր որ ապաշխարել ուզողներ ոտքի կայնին: Կայնողները այնքան շատ էին եւ աղօթողները այնպէս մը իրարու ետեւէ կ'աղօթէին, առանց ժամանակ ձգելու ուրիշին որ ստիպեցին աւետարանիչը յորդորել որ կայնողները աղօթեն առանց կարգի սպասելու: Եկեղեցւոյ սըրահը աղօթքի ձայներով լեցուն էր, կարծես Յայտ. ԺԹ. 6ի մէկ մանրանկարը կը ներկայացնէր: Ոմանք կուլային, ուրիշներ կը հռաչէին, ուրիշներ կ'աղօթէին, ուրիշներ փառք կուտային ու մեղմօրէն կ'երգէին: Թերեւս 10 վայրկեան տեւեց այդ զեղեցիկ երկնային պահը: Օննիկ ալ պատենութիւնը շահագործեց եւ աղօթեց: Շատ լսողներ չեղան, միայն իրեն հետ կայնող իր կարգ մը ընկերները, որոնք նոյնպէս աղօթեցին եւ իր աղօթքին ալ «Ամէն» ըսին, ինչպէս ինքը անոնց աղօթքին: Ժողովը զովաբանական երգով մը փակուած էր, ամէն մարդ տուն կ'երթար: Ինք ալ տուն գնաց: Ընտանիքէն մէկը լըսած չէր իր աղօթքը բայց Տէրը լսած էր եւ ինք ալ հաստատ որոշումով կ'ուզէր կենալ իր աղօթքին ետեւ:

Ս. Հոգին կատակ չընէր, կը բռնէ մարդս իր խօսքին վրայ եւ կ'առաջնորդէ անոր գիտութեանէ ի գիտութիւն եւ լոյսէ ի լոյս:

Օննիկ պէտքը կ'զգար պատմելու իր մայրիկին, ինչ որ անցած էր այդ օր իր եւ Տէրոջը մէջտեղ, բայց զարմանալի զգացում մը գինքը կը կաշկանդէր: Բան մը կար, խնդիր մը որ շատոնց իր եւ մայրիկին մէջ ծածկուած մնացած էր. մայրիկը իր մասին երբեք չէր կասկածեր: Բայց Ս. Հոգին գիտէր եւ այս անգամ կ'ստիպէր գինքը ըսելով, պէտք է խոստովանիլ: Այդ բանը խոստովանիլ, մայրիկին առջեւ կարմրիլ ու ամչնալ եւ անոր վիշտերը վերանորոգել իրեն մահուան աստիճան դժուար կուգար: Ի՛նչ ընէ՛ր, ձրգէ՛ր ապաշխարութիւնը, խօսքը դրժէ՛ր, ո՛չ եւ ո՛չ մէկ գնով, բայց գիտէր ալ թէ կեղծ պիտի ըլլար այս ապաշխարութիւնը եթէ անցեալի իր ըրած անիրաւութիւնը ծածկուած մնար: Օննիկ աղօթքով Տէրոջը գիրկը նետուեցաւ եւ այս մեծ դժուարութիւնը ներկայացուց Անոր:

Ու Անիկա ըլլալիքին բոլոր պատասխանատուութիւնը իր վրայ առնելով, ցուցուց իրեն թէ խոստովանելու էր մօրը այդ անիրաւութիւնը եւ նաեւ ուրախացնու էր զայն վկայելով թէ Տէրը գինքը իրեն կանչած էր: Այդ իրիկուն Օննիկ տրտմութեան եւ ուրախութեան խառն զգացումով մը մայրիկին մօտեցաւ, պատմեց անոր ինչ որ Տէրը ըրած էր իրեն այդ շարժումն մէջ եւ

նաեւ ըսաւ որ մեծ ցաւով
ստիպուած էր խոստովա-
նիլ այն որ մինչեւ հիմա
իրենց երկուքին միջև ծա-
ծուկ մնացած էր եւ թէ
ինքը շատ կը ցաւէր որ
այն ատեն ինք պատճառ
եղած էր անոր մեծ վշտին:
Կ'զգար թէ մեծ անիրա-
ւութիւն ըրած էր բայց չէր
կրնար որեւէ բանով մը
չեղեալ համարիլ զայն, մի-
այն իր ներողամտութիւնը
կը խնդրէր, վստահելով իր
սիրոյն:




Մօրը ուրախութիւնը
այնքան շատ էր որ կէս
ականջով լսեց որդւոյն
խոստովանութիւնը, ներեց
անոր առանց ոեւէ յանդի-
մանութեան եւ զայն զըր-
կեց ու համբուրեց: Մայր
եւ որդի հոգեւոր կապով
մըն ալ կապուեցան իրա-
րու: Օննիկ Տէրոջը սիրելի
եւ ուրիշներու օգտակար
մէկը եղաւ:

Ուշադրութեան առի՞ր
սիրելի ընթերցող պատա-
նի, թէ Աստուած կը ներէ
մեր մեղքերը ե՞րբ եւ ի՞նչ
վիճակի մէջ որ զանք Ի-
րեն, բայց կայ կէտ մըն
ալ որ երբեք աննկատ առ-
նելու չենք: Ամենուն հետ
մաքուր հաշիւ ունենալ,
նոյնիսկ մօրը հետ: Ուրեմն
մեր ապաշխարութենէն
յետոյ, երբ Ս. Հոգին բան
մը ցուցնէ մեզի, որքան
ալ դժուար ըլլայ, վերցնե-
լու ենք, հնազանդելու ենք
Ս. Հոգիին որպէսզի անիկա
զմեզ աւելի յուսաւորէ եւ
դաստիարակէ: Վերելի հա-
մարը ուշադրութեան առի՞ր,
երանի՜ քեզի եթէ քեզի
այսպէս թողութիւն եղաւ:

ԵՐԳ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՆԱԵՒ ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

Տէրոջը ՅՈՒՍԱ

Թարգ. Գերմ. Յ. Ն. Ղ.



1. Ով անձն իմ, Տէրոջը յուսա միայն,
Ամէն բան Անոր տար, զի կ'օգնէ քեզ Ան:
Մի վըճառիր, լոյս օրեր կ'ուզան,
Ինչպէս մի զարուն նոր՝ հետեւի ձմրան:
Ժանտ փոթորկաց դէմ՝ դառն նեղութեան,
Քեզ պիտի պահէ Ան — Մեծ եփովան:
2. Ով անձն իմ, Տէրոջը յուսա միայն,
Ամէն բան Անոր տար, զի կ'օգնէ քեզ Ան,
Թէ յոյսդ փշրի, քեզ չի լըքեր Տէրն,
Տառապանք եղած չէ մեծ, քան օգնական,
«Հաւտարիմ Փրկիչ» միշտ կոչուի Ան,
Պիտի փրկէ անշուշտ քեզ «Մեծ եփովան»:
3. Ով անձն իմ, Տէրոջը յուսա միայն,
Ամէն բան Անոր տար, զի կ'օգնէ քեզ Ան:
Շուտ պիտի դադրին օրեր պանդխտեան,
Ողբեր լըռեն ընդմիշտ, վիշտեր վերջանան.
Յետ ցաւոց դըժխեմ, յետ նեղութեան,
Լոյս խաղտղ ծագէ պիտ՝ «Մեծ եփովան»:

ՀԱՅ ԱՎԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շաբաթամիջի աղօթածողութներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԼ—Հովիւ՝ Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

8. 30 կիր. դաս մեծերու 2 r. Philippe de Giraid
15 30ին աղօթածողով, " »

Կիր. ժամը 13 45ին քարոզածողով, " »
Մանկանց համար

Կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէնժուլիէն եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Լէզ Օլիվ, Սէն ժէրոմ, Ս. Միքր, Ալք, Պուլ-
վար Օտո մասնաւոր բնակարաններու մէջ:

Շաբաթամիջի ժողովներ

Բ. շբ. ժամը 2ին Սէնժ Անճուան,

Դ. շբ. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիվ

Դ. շբ. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse
Ե. շբ. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 20ին Camp Victor Hugo

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ՝ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon, St. Loup

Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:

10. 30ին Ս. գրական ուսումնա.

15 30 ին քարոզածողով:

ՍԷՆՏ ՄԱՐԿՐԻԹ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով:

ԼԱ ՍԻՅԱ.—Քարոզիչ՝ Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

Կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցիին մէջ

15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ՝ Վեր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԻ.—

Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՅՆԹԷԼԻՄԱՐ.—

Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ Բրոֆ. Գ. Գ. Խալիկեան
55 Ave. Jean Jaurès, Bourg les Valence

(Drôme

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ՝ Վեր. Ժ. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebate

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երկուսարդուհիներու

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebate.

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Աքրահամեան

60 Rue Richelandière

Կիր. ժամը 10. 30ին քարոզածողով

51 Rue de la République

17ին աղօթածողով

Արմէ տիւ. Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻԶ—Հովիւ՝ Պատ. Զ. Բ. Պուտաքեան,

10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով

11 Rue Jean Bert Ա յարկ Met. Rennes

Ամսոյն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Ք. Ը. քա-

նախօռնին: Ամսոյն Գ. կիր. ժ. 16ին Օ. Ք. Ը.

37 Rue Tournesfort Paris 5 Metro Mouhe

Կիր. ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ՝ Պր. Մ. Վէքիլեան

22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց

Կիր. ժամը 10ին պաշտամունք

երկու կիր. անգամ մը 7.30ին երկա. խառն ժողով

Rue des Brochets, Alfortville

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՐԱՑՈՑՑԸ

1937Ի

«Բանբեր»ի պատկերազարդ օրացույցը, որ իր գեղեցկագիտական բոլոր նրբութիւններով եւ հաշակաւորութեամբը ծանօթ է «Բանբեր»ի ընտանիքին ու անոր միջոցաւ հարիւրաւոր ուրիշ ընտանիքներու, արդէն հրապարակ ելած է, ինչպէս ասկէ առաջ արդէն ծանուցած էինք: Գինը նոյնն է 7. 50 ֆրանք կամ կէս ամերիկեան տոլար արտասահմանի, 6. 50 ֆր. ֆրանսայի եւ Սուրիոյ համար: Օգոստոսի սկիզբը «Բանբեր»ի հետ արդէն թղթատարի կը յանձնուի անոնց հասցէներուն որոնք արդէն ապսպրած են: 1936 տարին շատեր առանց օրացույցի մնացին, ոմանք ալ ուշ ապսպրեցին եւ չկրցան գոհացում գտնել, ուստի եթէ Հայ Ընտանիքին Օրացույցը կ'ուզես յառաջիկայ տարի ունենալ եւ կամ նուիրել բարեկամ ընտանիքի, լաւ կ'ըլլայ որ անմիջապէս ապսպրես, որ չըլլայ թէ վերջը շատ ուշ ըլլայ:

«Բանբեր»ի օրացույցին օգտակարութիւնը եւ անոր սիրած օրհնութիւնը ակնյայտ է: Ասիկա կը փաստէ անոր ամէն կողմէ փնտռուած ըլլալը:

Այս տարի ալ տպագրութիւնը շատ յաջող անցաւ: Ուրեմն 1937ի մեր տան օրացույցը յաջորդէ անմիջապէս 1936ի, նաեւ այն տուններուն մէջ ուր Հայ Ընտանիքի Օրացույցը մտած չէ մինչեւ հիմա:

Մեր նշանաբանն ու փափաքն է «Ամէն հայ ընտանեկան յարկի մէջ մէկ Հայ Ընտանիքի Օրացույց»:

Շնորհակալութիւն այն ամենուն որոնք ամենապզտիկ ջանք մը ըրին մինչեւ հիմա եւ կ'ընեն ու պիտի ընեն այս նշանաբանը իրականացնելու գործին մէջ: Անով ամէն օրուան աստուածային յուշարար մը կը ղրկենք հայ ընտանեաց համար: Տէրը Իր փառքին համար գործածէ զայն: Մեր աղօթքները անոնց կ'ընկերանան: